ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

NED

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ.

ԽՆԴԻՐՆԵՐ,

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երևան 2024

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ.

ԽՆԴԻՐՆԵՐ, ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Երևան 2024

Հրապարակող՝

ԼԻԲԵՐԱԼ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Կայք՝ https://liberalinstitute.am/
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/YouthPoliticalEducation

Էջադրող և ձևավորող՝
Նորայր Բաղդասարյան

Խմբագիր՝
Աշոտ Մկրյան

Տառատեսակ՝
Noto Sans Armenian

NED NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

Սույն աշխատանքը հրապարակվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Լսելով մտահոգությունները կառուցել երկխոսություն հայ-թուրքական հարաբերություններում» ծրագրի շրջանակներում:

Ձեռնարկում տեղ գտած տեսակետներն ու վերլուծություններն արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Լիբերալ քաղաքականության ինստիտուտի և Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի դիրքորոշումների հետ:

© Լիբերալ քաղաքականության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ 6

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ 9

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 11

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ 54

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 68

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ 84

1 ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

2020 թ. Ղարաբաղյան պատերազմից հետո ՀՀ արտաքին քաղաքական մարտահրավերները զգալիորեն փոփոխվում են, ինչի հետևանքով էլ առաջ է գալիս քաղաքական բանավեճի նոր օրակարգ: Հասարակության շրջանում ամենից շատ հետաքրքրություն առաջացրած հարցերից են հայ-թուրքական հարաբերությունները, դրանց զարգացման հնարավոր ուղղություններն ու դինամիկան, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա միջպետական ցամաքային սահմանի հնարավոր բացումը:

ՀՀ-ի շուրջը ձևավորված անվտանգային նոր իրավիճակն ու տարածաշրջանում ուժերի վերաբաշխումը գործող իշխանություններին ստիպում են արտաքին քաղաքականության մեջ, մասնավորապես Թուրքիայի հետ հարաբերություններում սկզբունքային փոփոխություններ կատարել: Այնուամենայնիվ, գործընթացի սկզբից ևեթ ի հայտ են գալիս որոշակի խնդիրներ և ռիսկեր, իսկ հավասարակշռված քաղաքականության սկզբունքը ենթադրում է, որ այդ բոլոր խնդիրներն ու ռիսկերը պետք է գնահատվեն և հասցեգրվեն: Մյուս կողմից՝ պետք է հաշվի առնվի նաև այն հանգամանքը, որ թեև Հայաստանը բռնել է ժողովրդավարացման ուղին, սակայն քաղաքական համակարգի բևեռացումը, ատելության խոսքի բարձր մակարդակը, անվտանգության և ուրիշ այլ հարցեր լուրջ սպառնալիքներ են ստեղծում այդ ճանապարհին:

Թվարկված խնդիրներն ու մարտահրավերները լուծելու համար չափազանց կարևոր է հասարակության տարբեր շերտերի համախմբումը: Այդ հրամայականից ելնելով՝ «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ուղեղային կենտրոնը 2023 թ. հունիսին քանակական հետազոտություն է անցկացրել հայ-թուրքական սահմանին գտնվող համայնքների բնակիչների շրջանում՝ նպատակ ունենալով պարզել նրանց կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և սահմանի հնարավոր

բացման մասին, ինչպես նաև վեր հանել հիմնական մտավախությունները, անհանգստություններն ու առաջարկները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

Ուսումնասիրության շրջանակում առաջադրված նպատակին հասնելու համար ընտրվել է առդեմ հարցման մեթոդը, որը հնարավորություն է տվել սեղմ ժամկետներում անհրաժեշտ տվյալներ հավաքագրել Արագածոտնի, Արարատի, Արմավիրի և Շիրակի սահմանամերձ համայնքներում բնակվող սոցիալական տարբեր խմբերի կարծիքների վերաբերյալ: Հարցաթերթը բաղկացած է եղել 18 հիմնական կետերից (տե՛ս՝ *Հավելված 1.*), որոնցից 3-ը հարցվողներին հնարավորություն են տվել մեկնաբանելու իրենց պատասխանները՝ ավելի համապարփակ պատկեր ապահովելով:

Առդեմ հարցման ընտրանքը

Առդեմ հարցումն անցկացվել է ՀՀ չափահաս բնակիչների շրջանում: Հարցվողների ընտրությունը կատարվել է համակցված-շերտավորված ընտրանքի մեթոդաբանությամբ: Ընտրանքի հատկանիշ են եղել.

- Թուրքիայի հետ սահմանակից ՀՀ մարզերը (տե՛ս՝ *Գրաֆիկ 1.*),
- սահմանին գտնվող հայկական գյուղական բնակավայրերը (տե՛ս՝ *Աղյուսակ 1.*),
- Թուրքիայի հետ սահմանակից ՀՀ մարզերի գյուղական համայնքների բնակիչների համաչափ քվոտային ընտրանքն ըստ սեռի և տարիքային հինգ խմբերի (18-29, 30-39, 40-49, 50-59, 60 տարեկան և ավելի):

Ընտրանքային համախմբության ծավալը հաշվարկվել է վիճակագրական բանաձևի միջոցով (արդյունքների 95%-ի միջակայքում. ±4,7%-ի մեծության սխալի դեպքում ընտրանքի ծավալը կազմում է 400 միավոր):



Աղյուսակ 1. Հարցվածների բաշխվածությունն ըստ բնակավայրերի

Մարզ	Բնակավայր	Բնակչություն	Հարցվածների քանակ
Արարատ	1. Ազատավան	2.895	38
	2. Լուսառատ	2.699	35
	3. Նորամարգ	2.069	27
	4. Նոյակերտ	1.634	22
	5. Եղեգավան	1.420	19
	6. Ռանչպար	1.413	19
	7. Արաքսավան	732	10
Արմավիր	1. Ջանֆիդա	3.488	40
	2. Փշատավան	2.666	31
	3. Մարգարա	1.420	17
	4. Վանանդ	1.005	12
	5. Երվանդաշատ	782	10

	6. Բերքաշատ	631	10
Շիրակ	1. Ախուրիկ	1.238	23
	2. Բայանդուր	725	14
	3. Լուսաղբյուր	716	13
	4. Հայկաձոր	542	10
	5. Մեղրաշատ	532	10
	6. Անիպեմզա	505	10
Արագածոտն	1. Արագածավան	6.220	20
	2. Թլիկ	162	10

400 վավեր հարցաթերթ լրացնելու համար կատարվել է 496 այց: Հարցմանը մասնակցելուց հրաժարվել է 23 հոգի (4,6%): 73 դեպք (8,9%) է գրանցվել, որ քվոտային համապատասխան հարցվողներ չեն եղել:

Տվյալների վերլուծությունը կատարվել է SPSS վիճակագրական փաթեթի միջոցով. հաշվարկվել են հաճախականություններ, փոխկապվածություններ, կատարվել է խաչաձև վերլուծություն:

ՀԱՐՑՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հետազոտության ընթացքում հարցվել է 400 բնակիչ՝ 45%-ը՝ արական, 55%-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ: Տարիքային խմբերը ներկայացված են ընտրանքում (տե՛ս՝ *Գրաֆիկ 2.*): Հարցվածների 10,8%-ն ունի բարձրագույն, 18%-ը՝ միջին մասնագիտական, 71,3%-ը՝ միջնակարգ կրթություն:



Հարցվածների 66,2%-ն ունի աշխատանքային զբաղվածություն (տե՛ս՝ *Գրաֆիկ 3.*):



Հետազոտության տվյալների համաձայն՝ հարցվածների 24%-ի ընտանիքների ամսական միջին եկամուտը հիմնականում մինչև 70.000, 39%-ինը՝ 70.000-130.000 ՀՀ դրամ է (տե՛ս՝ *Գծապատկեր 1.*): Ընտանիքների անդամները միջինում 5-ն են (նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 15):

Գծապատկեր 1. Հարցվածների ընտանիքների ամսական միջին եկամուտը



ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



Հարցվածներից 61-ը (15,3%) պատասխանել են, որ ծնվել են այդտեղ, 117-ը՝ (29,3%) նշել, որ իրենց ծնողներն էլ են ծնվել նույն բնակավայրում: 4 հոգի (1%) ասել է, որ այդ համայքնում է ապրում 1 տարի կամ ավելի քիչ: 1-5 տարի տվյալ բնակավայրում է ապրում 15 (3,8%), 6-10 տարի՝ 13 հոգի (3,3%), իսկ 11 տարի և ավելի նույն համայնքում բնակվողները 190-ն են (47,5%):



Հարցին, թե փոխվել է արդյոք համայնքի բնակիչների թվաքանակը վերջին տասը տարվա ընթացքում, հարցվածների 33,5%-ը պատասխանել է, որ ամեն բան փոխվել է, և որ նոր բնակիչներն ավելի շատ են, 33,5%-ը՝ պնդել, որ եղել են զգալի փոփոխություններ: Ոմանք կարծում են, որ գրեթե ոչինչ չի փոխվել (16,5%), կամ չնչին փոփոխություններ են եղել (8%):



Պատասխանների ընդհանուր պատկերը ցույց է տալիս, որ բնակիչներն ամենից հաճախ հակված են եղել միջին գնահատել իրենց համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը շրջանի այլ բնակավայրերի համեմատությամբ (34,8%): Բացասական գնահատածների («2» և «1») համամասնությունը 25,8% է, իսկ դրական («4» և «5») գնահատածներինը՝ 36,5%: Մնացած 3%-ը դժվարացել է պատասխանել:

Այստեղ էական տարբերություն է զգացվում ցուցանիշներում ըստ մարզերի: Շիրակի և Արագածոտնի համայնքների բնակիչներն ավելի հակված են եղել ցածր գնահատելու իրենց բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակը, քան Արարատի և Արմավիրի բնակիչները. Արագածոտնում հարցվածների 10%-ը և Շիրակում 5%-ն են դրական գնահատական տվել (ընդ որում՝ Արագածոտնում որևէ մեկը չի գնահատել «5»), իսկ Արարատում և Արմավիրում ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 40% և 59,2%: Ստորև կարելի տեսնել նաև այլ օրինակներ, թե ինչպես են տարբերվում ցուցանիշներն ըստ մարզերի:

	Արագածոտն		**Արարատ**		**Արմավիր**		**Շիրակ**		**Ընդհանուր**	
	Քանակ	**Տոկոս**	**Քանակ**	**Տոկոս**	**Քանակ**	**Տոկոս**	**Քանակ**	**Տոկոս**	**Քանակ**	**Տոկոս**
1.	7	23,3%	21	12,4%	8	6,7%	9	11,3%	**45**	**11,3%**
2.	3	10%	24	14,1%	3	2,5%	28	35%	**58**	**14,5%**
3.	17	56,7%	54	31,8%	31	25,8%	37	46,3%	**139**	**34,8%**
4.	3	10%	49	28,8%	32	26,7%	2	2,5%	**86**	**21,5%**
5.	0	0%	19	11,2%	39	32,5%	2	2,5%	**60**	**15,0%**
ԴՊ	0	0%	3	1,8%	7	5,8%	2	2,5%	**12**	**3,0%**
Ընդհանուր	**30**	**100%**	**170**	**100%**	**120**	**100%**	**80**	**100%**	**400**	**100%**

**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Հարցը եղել է բազմակի պատասխանի հնարավորությամբ: Բնակիչներն ընդհանուր առմամբ տվել են 551 պատասխան՝ մատնանշելով 19 խնդիր: Հարցվածներից 52-ը (9,4%) դժվարացել են որևէ խնդիր առանձնացնել: Ամենից հաճախ խաղաղության (36,5%) և անվտանգության (13%) խնդիրներն են մատնացույց արվել: Համեմատաբար ավելի շատ հնչած պատասխանների շարքում են տարածքային ամբողջականության (7,8%), տնտեսական զարգացման (7,6%) և աշխատավարձերի բարձրացման (5,4%) հիմնախնդիրները: Հարկ է նկատել, որ հարցվածների կեսից ավելին անվտանգությունն է համարում ամենակարևոր խնդիրը:


Q5. Որո՞նք են, ըստ Ձեզ, Ձեր համայնքի առավել կարևոր, հրատապ լուծում պահանջող խնդիրները:
Դժվարանում եմ պատասխանել
Չկան
Կոմպետենտ և երիտասարդ ղեկավարության նշանակում, կադրերի երիտասարդեցում
Երիտասարդներին արժանավայել կյանքի ապահովում
Հարևան երկրի հետ սահմանների բացում
Տրանսպորտային խնդիրների լուծում
Կաշառակերության, հովանավորչության դեմ պայքար
Տնտեսության զարգացման համար ներդրումների ապահովում, մենաշնորհից ազատում
Ջրահեռացման խնդիրների լուծում
Գազաֆիկացման խնդիրներ լուծում
Էլեկտրաէներգիայի խնդիրների լուծում
Ջրամատակարարման խնդրի լուծում
Մշակութային կյանքի զարգացում, ժամանցի վայրերի ավելացում (սրճարաններ)
Բնակիչների համար առողջապահական խնդիրների լուծում (նեղ մասնագիտական...
Նախակրթարանների հիմնախնդիրների լուծում՝ կառուցում, նորոգում, ջեռուցում, սնունդ և այլն
Բնակարանաշինություն և բնակարանների ապահովում
Անվտանգություն, համայնքում ապահով և հանգիստ մթնոլորտի ապահովում
Սոցիալական խնդիրների լուծում՝ կենսաթոշակի և նպաստի ավելացում, հաշմանդամություն...
Աշխատատեղերի ապահովում, գործազրկության կրճատում
Համայնքի բարեկարգում, փողոցների, բակերի, շենքերի, տանիքների, խաղահրապարակների...
0
20
40
60
80
100
120
140
160
Տոկոս
Քանակ

Այս հարցը նույնպես եղել է բազմակի պատասխանի հնարավորությամբ: Հարկ է նկատել, որ համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ հարցին ավելի շատ պատասխաններ են տրվել, և դրսևորել է ավելի մեծ ակտիվություն: Ընդհանուր առմամբ հնչել է 760 պատասխան, մատնանշվել 18 խնդիր: Հարցվածներից 10-ն են դժվարացել պատասխանել, 46-ն ասել են, որ հիմնախնդիրներ չկան: Առավել հաճախ նշվել են համայնքի բարեկարգման, տրանսպորտի, գործազրկության և կոմունալ խնդիրները:

Q6. Սահմանի փակ լինելը խանգարել է մեր համայնքի զարգացումը բնական ռեսուրսների օգտագործման անհնարինության/սահմանափակման պատճառով:



Հարցվածների զգալի մասը՝ 36,3%-ը, կարծում է, որ սահմանի փակ լինելը խանգարել է իրենց համայնքի զարգացումը բնական ռեսուրսների օգտագործման անհնարինության/սահմանափակ հնարավորության պատճառով, միևնույն ժամանակ, 55%-ը համաձայն չի եղել այդ պնդմանը: **Արագածոտնում հարցվածների 80%-ն է համաձայն այս պնդմանը, Շիրակում՝ 73,8%-ը**: Արագածոտնում չի եղել բացասական պատասխան տվող հարցված (20%-ը դժվարացել է պատասխանել): Արարատի մարզինը մոտ է ընդհանուր ցուցանիշին՝ 26,5%: Արմավիրում պնդմանը համաձայն է եղել հարցվածների 14,5%-ը: Որոշակի տարբերություն է նկատվում ըստ

սեռի պատասխաններում. տղամարդկանց 42,2%-ն է համաձայն եղել պնդմանը, կանանց՝ 31,4%-ը:



Պատկերը գրեթե նույնն է այս ենթակետի պարագայում. 35,3%-ը համաձայն է, որ սահմանի փակ լինելը խանգարել է առևտրաշրջանառությունը՝ ի տարբերություն 58,5%-ի: Հարցվածների 66,7%-ը Արագածոտնում և 66,3%-ը Շիրակում համաձայն են այս պնդմանը: Արարատի և Արմավիրի ցուցանիշները կազմում է համապատասխանաբար 29,4% և 15%:



Հարցվածների 36%-ը կարծում է, որ սահմանի փակ լինելը հոգեբանական մեծ ճնշում է, իսկ 61,3%-ը համաձայն չէ դրան: Պնդմանը համաձայնածների համամասնությունն ըստ մարզերի հետևյալն է՝ Արագածոտն՝ 86,7%, Արարատ՝ 18,2%, Արմավիր՝ 13,2%, Շիրակ՝ 88,8%: Կրկին նկատվում է զգալի տարբերություն մի կողմից Շիրակ-Արագածոտնում, մյուս կողմից՝ Արարատ-Արմավիրում:



Հարցվածների 70%-ից ավելին սահմանի փակ լինելը նույնացնում է պաշտպանվածության զգացման հետ: 26%-ը համաձայն չէ պնդմանը: Արագածոտնում հարցվածների 6,7%-ը համաձայն է եղել դատողությանը, 80%-ը՝ ոչ: Արարատում արձանագրվել է 88,8% դրական և 10% բացասական, Արմավիրում՝ 94,2% դրական, 5% բացասական, Շիրակում՝ 18,8% դրական և 72% բացասական պատասխան:



Հարցվածների 71,3%-ը համաձայն է, որ սահմանի փակ լինելը ապահովագրում է տեղական արտադրանքի սպառումը, 26,5%-ը՝ ոչ: Արագածոտնում 93,3%-ը բացասական դիրքորոշում է հայտնել պնդման վերաբերյալ, դրական կարծիքներ չեն եղել առհասարակ: Արարատում դրականորեն է արտահայտվել հարցվածների 90,6%-ը, բացասաբար՝ 8,2%-ը: Արմավիրում հնչել է 95% դրական, 4,2% բացասական, Շիրակում՝ 21,3% դրական, 73,8% բացասական պատասխան:



Հարցվածների 70%-ից ավելին կարծում է, որ սահմանի փակ լինելը ապահովել է հայկական մշակույթի պահպանումը, իսկ 26,5%-ը հակառակ կարծիքին է: Արագածոտնում և Շիրակում դրական պատասխան տվածների համամասնությունը կազմում է 0% և 20%, իսկ Արարատում և Արմավիրում՝ 90,6% և 94,2%: Արագածոտնում, Արարատում, Արմավիրում և Շիրակում բացասական պատասխանները համապատասխանորեն բաշխվել են հետևյալ կերպ՝ 86,7%, 8,2%, 5%, 75%:

Տրված պատասխանների և հարցվածների տարիքի միջև զգալի տարբերություն չի նկատվում, իսկ սեռով պայմանավորված տարբերություն առկա է միայն առաջին ենթակետում: Եկամտի չափը և տրված պատասխանների միջև նույնպես ուղղակի կապ կա, սակայն **ահռելի տարբերություն կա ըստ մարզերի**: Պատասխանների ընդհանրություն դիտվում է Արագածոտն-Շիրակ և Արմավիր-Արարատ զույգերի շրջանում. առաջին զույգի հարցվածներն ավելի հաճախ են համաձայն եղել այն պնդմանը, որ սահմանի փակ լինելը բացասական ազդեցություն է ունեցել, քան երկրորդ զույգինը:

Q7. Այսօր որքանո՞վ է այդ սահմանը պաշտպանված:



Ըստ հարցվածների 84,5%-ի՝ հայ-թուրքական միջպետական սահմանը պաշտպանված է: 10,5%-ը հակառակ կարծիքին է: 5%-ը դժվարացել է պատասխանել հարցին: Այստեղ տարբերությունը ըստ մարզերի զգալի չէ: Շիրակում հարցվածների 92,6%-ը պաշտպանված է համարում սահմանը՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցելով: Պատասխանների տարբերություն չի արձանագրվել ըստ եկամտի, սեռի և տարիքի:



Հարցվածների 96,5%-ը պատասխանել է, որ ձկնորսության, հողագործության կամ զբոսանքի համար երբևէ չի հատել իր բնակավայրին հարող հայ-թուրքական սահմանը: 12 հարցվող (3%) նշել է, որ պարբերաբար հատում է այն, իսկ 2-ն (0,5%) ասել են, որ մեկ անգամ է եղել նման դեպք: Պարբերաբար հատողները բնակվում են Արարատի և Արմավիրի մարզերում:



Հարցվածների մեծ մասը (97,3%) երբևէ չի եղել Թուրքիայի տարածքում: Այցելածների հիմնական նպատակը եղել է տուրիզմը, Թուրքիայի արևելքում (ըստ հարցվածների՝ Արևմտյան Հայաստան) գտնվող հայկական պատմամշակութային վայրեր այցելությունը, առևտուրը, աշխատանքային գործուղումը, ազգականների/ընկերների հետ տեսակցությունը:



Հարցին, թե արդյոք տեղյակ են, որ 2023 թ. հունիսի 1-ից օտարերկրացիների համար բացվելու է հայ-թուրքական սահմանը, 45,3%-ը պատասխանել է, որ տեղյակ է, 13,3%-ը՝ որոշ չափով, իսկ 41,5%-ը տեղյակ չէ:



Հունիսի 1-ին սահմանի ենթադրական բացման հարցի շուրջ լիովին կամ ավելի շուտ դրական վերաբերմունք է արտահայտել հարցվածների 27,6%-ը, իսկ լիովին կամ ավելի շուտ բացասական՝ 63,8%-ը: Ըստ սեռի պատասխանների տարբերություն չի նկատվում: 30-39 տ. անձինք ավելի հաճախ են դրականորեն վերաբերվում երրորդ երկրների քաղաքացիների համար սահմանի բացմանը (42,3%): Դրական վերաբերմունքի միջինից ավելի ցածր ցուցանիշ է գրանցված 40-49 և 50-59 տարեկանների խմբերում՝ համապատասխանաբար 21% և 21,3%: Ըստ մարզերի զգալի տարբերություն է նկատվում միայն Շիրակում. հարցվածների 37,6% դրականորեն է վերաբերվում օտարերկրացիների համար սահմանի բացմանը: Փոխկապակցվածություն է նկատվում նաև եկամտի չափի և վերաբերմունքի միջև. 200.000-300.000 և 300.000-500.000 ՀՀ դրամ ամսական եկամուտ ունեցողների համապատասխանաբար 41,1%-ը և 75%-ն այս հարցի շուրջ դրական վերաբերմունք է արտահայտել:



Հարցվածների վերաբերմունքը հայ-թուրքական սահմանի վերաբացման խնդրին ընդհանուր առմամբ հետևյալն է՝ **29,1%-ը լիովին կամ ավելի շուտ կողմ է, 63,8%-ը՝ դեմ**, **7,5%-ը դժվարացել է պատասխանել**: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ ստորև կներկայացվի պատասխանների փոխկապակցվածությունը թե՛ ժողովրդագրական տվյալների և թե՛ այլ հարցերի ստացված արդյունքների հետ:

Կանանց և տղամարդկանց պատասխանները բաշխված են գրեթե նույն համամասնությամբ:

30-39 տ. հարցվածներն ամենից շատն են կողմ սահմանի վերաբացմանը՝ 44,9%-ը: 50-59 տարեկաններն ամենից քիչն են հակված սահմանի վերաբացմանը. կողմ է միայն 20%-ը:

Ըստ մարզերի տարբերություն նկատվում է միայն Շիրակում, որտեղ բնակչության 37,5%-ն ավելի շուտ կողմ է սահմանի վերաբացմանը, բայց, միևնույն ժամանակ, հարցվածներից և ոչ մեկը լիովին կողմ չի եղել:

Զգալի տարբերություն է նկատվում նաև ըստ քաղաքական ուժի անդամցելու/համակրելու ցուցանիշի: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության աջակիցների 61%-ը կողմ է սահմանի

վերաբացմանը: Քաղաքական մյուս ուժերի աջակիցների քանակը բավարար չի եղել օրինաչափություն դուրս բերելու համար:

Հստակ համահարաբերություն է նկատվում եկամտի չափի և սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելու միջև. որքան բարձր է ամսական եկամուտը, այնքան մեծ է հակվածությունը կողմ լինելու: Այսպես, եկամտի չափի առանձնացված հինգ կատեգորիաներում ըստ աճման կարգի կողմ լինելու պատկերը հետևյալն է՝ մինչև 70.000 ՀՀ դրամ՝ 27,1%, 70.000-130.000 ՀՀ դրամ՝ 28,2%, 130.000-200.000 ՀՀ դրամ՝ 34%, 200.000-300.000 ՀՀ դրամ՝ 41,1%, 300.000 և ավելի ՀՀ դրամ՝ 75%: Հարկ է նկատել նաև, որ 300 հազարից ավելի եկամուտ ունեցողներից և ոչ մեկը դեմ չի արտահայտվել սահմանի վերաբացմանը:

Սահմանի վերաբացմանն ավելի շատ կողմ են իրենց համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը բարձր գնահատածները. «5» գնահատականը տվածների 41,7%-ը կողմ է վերաբացմանը, մինչդեռ «1» գնահատածներն ամենից քիչն են հակված սահմանի վերաբացմանը (20%-ն է կողմ):

Խաղաղության հարցը որպես երկրի համար կարևոր խնդիր նշածների շրջանում սահմանի վերաբացման կողմնակիցները մի փոքր ավելի շատ են. նրանց 34,7%-ն է կողմ: Փոխկապակցվածություն չի նկատվում անվտանգությունը որպես հիմնախնդիր նշելու և սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելու միջև:

Փոխկապակցվածություն է առկա նաև սահմանին վերաբացմանը կողմ լինելու և 6-րդ կետի պատասխանների միջև. առաջին երեք ենթակետերին դրականորեն և 4-6 ենթակետերին բացասաբար պատասխաննածներն են առավել հաճախ կողմ արտահայտվել սահմանի վերաբացմանը: Այսպես, հարցվածների, որ կարծում են, թե սահմանի փակ լինելը խոչընդոտել է իրենց համայնքի զարգացումը, 40,7%-ն է կողմ սահմանի վերաբացմանը: Այն անձանց, որ կարծում են՝ սահմանի փակ լինելը խոչընդոտել է առևտրաշրջանառությունը, 41,8%-ն է կողմ սահմանի վերաբացմանը: Հարցվածների, որ կարծում են, թե սահմանի փակ լինելը հոգեբանական մեծ ճնշում է, 41,7%-ն է կողմ սահմանի վերաբացմանը: Այն անձանց, որոնց համար սահմանի փակ լինելը պաշտպանվածության

զգացում չի առաջացնում, 38,1%-ն է կողմ սահմանի վերաբացմանը: Հարցվածների, որ չեն կարծում՝ սահմանի փակ լինելը ապահովում է տեղական արտադրանքի սպառումը, 36,8%-ն կողմ է սահմանի վերաբացմանը: Այն անձանց, որ չեն կարծում, թե սահմանի փակ լինելը նպաստում է հայկական մշակույթի պահպանմանը, 35,8%-ն է կողմ սահմանի վերաբացմանը:

Նկատելի է, որ որոշակի կապ կա հայ-թուրքական սահմանի վերաբացման հետևանքներին առնչվող հարցերի պատասխանների և սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելու միջև:



Հարցվածների 38,8%-ը լիովին կամ ավելի շուտ համաձայն է, որ սահմանի վերաբացումը կնպաստի տնտեսական ներդրումների ավելացմանը, իսկ 55,6%-ը բացարձակապես կամ ավելի շուտ համաձայն չէ: Այս պնդմանն առավել հաճախ համաձայն են եղել 30-39 տարեկանները (53,9%-ը լիովին կամ ավելի շուտ համաձայն է): Կրկին զգալի տարբերություն է նկատվում ըստ մարզերի. Արագածոտնում հարցվածների 50%-ը, Շիրակում 52,6%-ը համաձայն են պնդմանը, մինչդեռ

Արարատում և Արմավիրում ցուցանիշը հետևյալն է՝ համապատասխանաբար 27,6% և 35,8%:

Այս պնդմանը համաձայնածների 92,2%-ը կողմ է սահմանի վերբացմանը, իսկ չհամաձյածների 83,4%-ը՝ դեմ: Հարկ է նկատել նաև, որ սահմանի վերբացմանը դեմ արտահայտվածների 12,6%-ը համաձայն է, որ սահմանի վերաբացումը կնպաստի ներդրումների ավելացման:

2. Հայ-թուրքական սահմանի վերաբացումը կնպաստի տուրիզմի զարգացմանը:



Հարցվածների 36,3%-ը լիովին կամ ավելի շուտ համաձայն է, որ սահմանի վերաբացումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը, 56,6%-ը՝ ոչ: Պնդմանն առավել հաճախ համաձայն են եղել երիտասարդները. 18-29 տարեկանների 40,2%-ը և 30-39 տարեկանների 52,5%-ը համաձայն են, մինչդեռ տարիքային մյուս խմբերում ցուցանիշը տատանվում է 21-25% միջակայքում: Պատկերը հետևյալն է ըստ մարզերի. Արագածոտնում 50%-ը, Շիրակում 55,1%-ը համաձայն են պնդմանը, մինչդեռ Արարատում և Արմավիրում՝ համապատասխանաբար 27,6%-ը և 39,2%-ը:

Սահմանի վերաբացման կողմնակիցների 88,8%-ը համաձայն է այս պնդմանը, 6%-ը՝ ոչ: Սահմանի վերբացմանը դեմ արտահայտվածների 83%-ը համաձայն չէ այս պնդմանը, մինչդեռ 13%-ը համաձայն է:



Հարցվածների 55,6%-ը հակված չէ հավատալու, որ սահմանի վերաբացումը կնպաստի առևտրաշրջանառության աճին, իսկ 38,5%-ը հակառակ կարծիքին է: Արագածոտնում 63,3%-ը, Շիրակում 51,3%-ը համաձայն են այս պնդմանը, իսկ Արարատում և Արմավիրում՝ համապատասխանաբար 27,6%-ը և 39,2%-ը: Սրան նույնպես ամենից շատ համաձայնել են 30-39 տարեկանները՝ 53,8% քանակական ցուցանիշով:

Վերաբացման կողմնակիցների 93,1%-ը համաձայն է պնդմանը, իսկ դեմ արտահայտվածների 83%-ը պատասխանել է, որ համաձայն չէ դրան: Վերջիններիս 14,9%-ն է կողմ արտահայտվել այս դիտարկմանը:



35.8%-ը համաձայն է, որ սահմանի վերաբացումը կբերի ենթակառուցվածքների զարգացմանը, մինչդեռ 58.1%-ը համաձայն չէ այս պնդման հետ: Ամենից հաճախ 30-39 տարեկաններն են համաձայնել այս պնդմանը (63.8%): Արագածոտնում հարցվածների 63.3%-ը և Շիրակում 51.3%-ը համաձայն են այս պնդման հետ:

Սահմանի վերաբացման կողմանկիցների 89.6%-ը համաձայն է ևս համաձայն է վերոնշյալ դիտարկման հետ, իսկ սահմանի վերաբացմանը դեմ անձանց 85.4%-ը կտրականապես համաձայն չէ:



Հարցվածների 58,1%-ը համաձայն չէ, որ սահմանի վերաբացումը կխթանի ծառայությունների ոլորտի զարգացումը, ի տարբերություն 34%-ի: Սահմանի բացման կողմնակիցների 89,6%-ը համաձայն է պնդմանը, իսկ դեմ արտահայտվածների 84,6%-ը՝ ոչ:



25,8%-ը համաձայն է պնդմանը, 65,6%-ը՝ ոչ: Սահմանի վերաբացման կողմնակիցների 62,9%-ն է համաձայն այս դիտարկմանը, ինչը զգալիորեն ցածր ցուցանիշ է նախորդ ենթակետերի համեմատությամբ: **Այսինքն՝ նույնիսկ սահմանի բացման օգտին հանդես եկող շատ քաղաքացիներ չեն կարծում, որ վերաբացումը կնպաստի անվտանգության ապահովմանը:** Հարցվածների 88,1%-ը կտրականապես դեմ է այս պնդմանը:

7. Հայ-թուրքական սահմանի վերաբացումը կնպաստի դիվանագիտական հարաբերությունների բարելավմանը:



Հարցվածների 31,6%-ը կարծում է, որ վերաբացումը կնպաստի դիվանագիտական հարաբերությունների բարելավմանը, 57,1%-ը՝ ոչ: Վերաբացման կողմնակիցների 68,9%-ը համաձայն է պնդմանը, վերաբացմանը դեմ արտահայտվածների 78,7%-ը՝ ոչ:



Հարցվածների 22,1%-ը համաձայն չէ, որ վերաբացումը կհանգեցնի էժան աշխատուժի ներհոսքի, 68,6%-ը հակառակ կարծիքին է: Սահմանի վերաբացմանը դեմ արտահայտվածների 68,8%-ը համաձայն է այս պնդմանը: Սահմանի վերաբացման կողմնակիցների 74.1%-ը համաձայն է, 17,2%-ը՝ ոչ: **Սա նշանակում է, որ վերաբացմանը կողմ անձանց մեծ մասը նույնպես սահմանի հնարավոր բացման հետևանք է տեսնում էժան աշխատուժի ներհոսքի ռիսկը:**



Հարցվածների 82,8%-ը կարծում է, որ սահմանի վերաբացումը հետևանք կդառնա Թուրքիայի քաղաքացիների՝ ՀՀ ներհոսքին և բնակեցմանը: Այս պնդմանը համաձայն չէ հարցվածների 9,1%-ը:



Հարցվածների 58,3%-ը համաձայն է, որ սահմանի վերաբացումը կհանգեցնի ՀՀ սահմանամերձ համայնքների դատարկմանը, 33,1%-ը՝ ոչ: Դեմ արտահայտվողների 76,3%-ը համաձայն են պնդմանը, իսկ վերաբացման կողմնակիցների 63,7%-ը՝ ոչ:

11. Հայ-թուրքական սահմանի վերաբացումը կհանգեցնի վախի և անվստահության մթնոլորտի, ինչպես նաև անվտանգային իրավիճակի խախտմանը:



Հարցվածների 77,8%-ը կարծում է, որ վերաբացումը կհանգեցնի վախի մթնոլորտի ձևավորմանը, 16,6%-ը համաձայն չէ դրան: Պնդմանը համաձայն են սահմանի բացմանը դեմ արտահայտվածների 91,3%-ը և կողմ արտահայտվածների 51,7%-ը: Հետևաբար սահմանի վերաբացման կողմնակիցների մեծ մասը նույնպես վախի մթնոլորտի ձևավորման ռիսկ է տեսնում:

12. Հայ-թուրքական սահմանի վերաբացումը կհանգեցնի թուրքական ապրանքների ներմուծմանը ՀՀ շուկա՝ էքսպանսիայի և մրցակցության թեժացման պատճառ դառնալով:



Հարցվածների 85,8%-ը կարծում է, որ վերաբացումը կհանգեցնի թուրքական ապրանքների ներմուծմանը ՀՀ շուկա: Սրան համաձայն չէ 7,8%-ը: Վերաբացմանը կողմ արտահայտվածների 84,4%-ը և դեմ արտահայտվածների 90,9%-ը համաձայն է այս պնդմանը: Այստեղ նույնպես գործ ունենք ռիսկի հետ, որը տեսնում է թե՛ սահմանի վերաբացման կողմնակից և թե՛ դրան դեմ հարցվածների բացարձակ մեծամասնությունը:



Հարցվածների 67,3%-ը համաձայն է այս պնդմանը, 22.6%-ը՝ ոչ: Վերաբացմանը դեմ արտահայտվածների 83,4%-ը համաձայն է սրան:



Հարցվածների 54,8%-ը համաձայն է պնդմանը, 37,8%-ը՝ ոչ :



Հարցվածների կեսից ավելին՝ 55,3%-ը, կարծում է, որ սահմանի վերաբացումը կհանգեցնի պետականության կորստի, 36,8%-ը՝ ոչ:

Ընդհանուր հարցն ամփոփելով՝ նշենք, որ սահմանի վերաբացմանը կողմ արտահայտվածներն ավելի հաճախ են համաձայն եղել այն պնդումներին, որոնք դրական հետևանք են ենթադրում, և հակառակը՝ դեմ արտահայտվածները հիմնականում համաձայն չեն եղել դրանց: Հարկ է նշել, որ, անկախ սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելուց, հարցվածների մեծ մասը կարծում է, թե սահմանի վերաբացումը կհանգեցնի էժան աշխատուժի և Թուրքիայի քաղաքացիների ներհոսքին Հայաստան: Հարցվածներն ամենից հաճախ համաձայնել են այն պնդումներին, որ սահմանի բացման հետևանքով հայկական շուկան կողողվի թուրքական ապրանքներով:



Հարցվածների 77,8%-ը պատասխանել է, որ սահմանի վերաբացման դեպքում չի այցելի Թուրքիա, իսկ 22,2%-ը ցանկություն ունի/չի բացառում: Կանայք ավելի հաճախ են ասել, որ չեն մեկնի (83,6%), քան տղամարդիկ (70,5%):



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Հարցը եղել է բազմակի պատասխանի հնարավորությամբ: Թուրքիայի արևելքում գտնվող հայկական պատմամշակութային վայրեր այցելելու, զբոսաշրջության, պատմական հայրենիքը տեսնելու և նախնիների տունը գտնելու տարբերակներն են ամենից հաճախ եղել:



Հարցին, թե որտեղ կբնակվեք, եթե սահմանը բացվի, մեծամասնությունը՝ 89,3%-ը, պատասխանել է, որ կմնա իր բնակավայրում: 3,5%-ը դժվարացել է պատասխանել, իսկ մնացած 7,4%-ը ասել է, որ ստիպված կլինի գաղթել: Որպես միգրացիոն ուղի ամենից հաճախ հնչած պատասխանը Ռուսաստանի Դաշնությունն է: 3,1%-ը նշում է, որ կտեղափոխվի ՀՀ որևէ բնակավայր կամ Լեռնային Ղարաբաղ, իսկ 4,3%-ը՝ այլ երկիր:



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

307 հարցված (76,75%) պատասխանել է, որ սահմանն այժմ վերահսկում են ՌԴ սահմանապահները: Հնչած տարբերակներիցն են եղել՝ հայ սահմանապահները, թուրք սահմանապահները: Մեկ անձ նշել է՝ ԱՄՆ խաղաղապահները:



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Ամենից հաճախ հնչած տարբերակներն են եղել՝ ՌԴ սահմանապահները, հայ սահմանապահները:



**Բազմակի պատասխանի հնարավորությամբ*

Հարցը եղել է բազմակի պատասխանի հնարավորությամբ: Այստեղ պատասխանները խիստ տարբեր են: Հարցվածների 18,4%-ը դժվարացել է պատասխանել: Ամենից հաճախ հնչած պատասխաններն են՝ անվտանգություն ապահովել, խաղաղություն հաստատել,

վերահսկողությունն ուժեղացնել, սահմանապահների թիվն ավելացնել, ժողովրդի կարծիքը լսել: Եղել են նաև այսպիսի պատասխաններ՝ պետք է փոխվեն իշխանությունները, ամեն գնով պետք է պայքարեն սահմանի վերաբացման դեմ:



Հարցվածների մեծ մասը՝ 82,3%-ը, իրեն քաղաքական որևէ ուժի համակիր/անդամ չի համարում: Եվս 1,5%-ը նույնն է պնդել՝ ավելացնելով, որ դեմ է իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը: Հարցվածներն ամենից հաճախ անդամկցում/համակրում են ՔՊ-ին՝ 10,3%: Այլ կուսակցությունների/քաղաքական ուժերի թվում են՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ, «Հայաստան» դաշինք:

ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

- 29,1%-ը լիովին կամ ավելի շուտ կողմ է սահմանի վերաբացմանը, իսկ 63,8%-ը (մեծամասնությունը)՝ դեմ:
- Շիրակի և Արագածոտնի համայնքների բնակիչներն ավելի հակված են ցածր գնահատելու իրենց բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակը, քան Արարատի և Արմավիրի բնակիչները:
- Հարցվածների կեսից ավելին նշել է անվտանգությունը որպես երկրի հիմնախնդիր:
- Ըստ հարցվածների 84,%-ի՝ հայ-թուրքական միջպետական սահմանը լիովին կամ ավելի շուտ պաշտպանված է, 10,5%-ը կարծում է, որ բացարձակապես կամ ավելի շուտ պաշտպանված չէ:
- Հարցվածներն Արագածոտնում և Շիրակում ավելի հաճախ են համաձայն եղել, որ սահմանի փակ լինելը բացասական ազդեցություն է ունեցել, քան Արմավիրում և Արարատում:
- 30-39 տ. հարցվածներն ամենից շատն են կողմ սահմանի վերաբացմանը (44,9%):
- Հստակ համահարաբերություն է նկատվում եկամտի չափի և սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելու միջև. որքան բարձր է ամսական եկամուտը, այնքան մեծ է հակվածությունը կողմ լինելու:
- Սահմանի վերաբացմանն ավելի շատ կողմ են իրենց համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը բարձր գնահատածները:
- Այն անձանց, որ կարծում են, թե սահմանի փակ լինելը խոչընդոտել է իրենց համայնքի զարգացումը, 40,7%-ն է կողմ սահմանի վերաբացմանը:
- Հարցվածների, որ կարծում են՝ սահմանի փակ լինելը խոչընդոտել է առևտրաշրջանառությունը, 41.8%-ն է կողմ սահմանի վերաբացմանը:
- Այն անձանց, որ կարծում են՝ սահմանի փակ լինելը հոգեբանական մեծ ճնշում է, 41.7%-ն է կողմ սահմանի վերաբացմանը:
- Անկախ սահմանի վերաբացմանը կողմ/դեմ լինելուց՝ հարցվածների մեծ մասը մտավախություն ունի, որ սահմանի վերաբացումը

կհանգեցնի էժան աշխատուժի և Թուրքիայի քաղաքացիների ներհոսքին ՀՀ:

- Հարցվածներն ամենից հաճախ համաձայնել են այն պնդումներին, որ սահմանի բացման հետևանքով հայկական շուկան կողողվի թուրքական ապրանքներով:
- Մեծամասնությունը՝ 89,3%-ը, նշել է, որ սահմանի վերաբացման դեպքում կմնա իր բնակավայրում: 7,4%-ն ասել են, որ ստիպված կլինեն դիմել արտագաղթի: 3,1%-ը նշում է, որ կտեղափոխվի ՀՀ որևէ բնակավայր կամ Լեռնային Ղարաբաղ, իսկ 4,3%-ը՝ արտերկիր: Միգրացիոն ուղիների շարքում ամենից հաճախ հնչած պատասխանը Ռուսաստանի Դաշնությունն է:
- Հարցվածներն ամենից հաճախ նշել են, որ մինչ սահմանը բացելը իշխանությունները պետք է անվտանգություն ապահովեն, խաղաղություն հաստատեն, վերահսկողությունն ուժեղացնեն, սահմանապահների թիվն ավելացնեն, ժողովրդի կարծիքը լսեն:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ՀԱՐՑԱԹԵՐԹ #__

Ամսաթիվ_____ Հարցազրուցավար_____ Հեռախոսահամար_____

Հարգելի՛ հայրենակից, «Էմպիրիկա» հետազոտական ընկերությունն անցկացնում է հարցում, որի նպատակն է հավաքագրել համայնքի կարիքներն ու բնակիչների մտահոգությունները, դրանց արդյունավետ հասցեագրման և ստեղծված իրավիճակի լուծմանն ուղղված առաջարկությունների մշակման նպատակով:

Q1. Որքա՞ն ժամանակ եք բնակվում այս համայնքում:

1. Այստեղ են ապրել դեռևս իմ պապերն ու ծնողները
2. Այստեղ եմ ծնվել
3. Մինչև 1 տարի
4. 1-5 տարի
5. 6-10 տարի
6. 11 տարի և ավելի

Q2. Փոխվե՞լ է արդյոք Ձեր համայնքի բնակիչների թվաքանակը վերջին տասը տարվա ընթացքում:

1. Գրեթե չի փոխվել
2. Չնչին փոփոխություններ են եղել ամուսնությունների, ծնունդների և մահերի հետևանքով
3. Զգալի փոփոխություններ են եղել. նվազել է տեղափոխման, տները վաճառելու/լքելու հետևանքով
4. Ամեն բան փոխվել է. նոր բնակիչներն ավելի շատ են
5. Այլ (նշել) _____
6. Դժվարանում եմ պատասխանել

Q3. Գնահատեք, խնդրեմ, Ձեր բնակավայրի սոցիալ-տնտեսական վիճակը շրջանի այլ բնակավայրերի համեմատությամբ «1-5» բալային համակարգով, որտեղ «5»-ը ամենաբարձրն է, «1»-ը՝ ամենացածրը:

1. «1» 2. «2» 3. «3» 4. «5» 5. «5»
6. Դժվարանում եմ գնահատել

Q4. Որո՞նք են մեր երկրի ամենակարևոր խնդիրները:

1. _____
2. _____

3. _____ 4. Դժվարանում եմ պատասխանել

Q5. Որո՞նք են, ըստ Ձեզ, Ձեր համայնքի առավել կարևոր, հրատապ լուծում պահանջող խնդիրները (նշե՛ք երեքը):

Հիմնախնդիրներ	
1. Համայնքի բարեկարգում՝ փողոցների, բակերի, շենքերի, տանիքների, վերելակների, խաղահրապարակների ևն վերակառուցում, նորոգում	13. Տնտեսական ներդրումների ապահովում, մենաշնորհի վերացում
2. Աշխատատեղերի ապահովում, գործազրկության կրճատում	14. Կաշառակերության, հովանավորչության դեմ պայքար
3. Սոցիալական խնդիրների լուծում՝ կենսաթոշակի և նպաստի ավելացում, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծում	15. Տրանսպորտային խնդիրների լուծում
4. Անվտանգություն, համայնքում ապահով և հանգիստ մթնոլորտի ապահովում	16. Անհանդուրժողականության վերացում, միասնության, համախմբվածության ապահովում
5. Բնակարանաշինություն և բնակարանների ապահովում	17. Զբոսաշրջության զարգացում
6. Նախակրթարանների հիմնախնդիրների լուծում՝ կառուցում, նորոգում, ջեռուցում, սնունդ ևն	18. Հարևան երկրի հետ սահմանների բացում
7. Բնակիչների առողջապահական խնդիրների լուծում (նեղ մասնագետ բժիշկների ապահովում, որակյալ բուժօգնություն)	19. Բրենդային խանութների ավելացում
8. Մշակութային կյանքի զարգացում, ժամանցի վայրերի ավելացում (սրճարաններ)	20. Երիտասարդների արժանավայել կյանքի ապահովում
9. Ջրամատակարարման խնդրի լուծում	21. Կոմպետենտ և երիտասարդ ղեկավարության նշանակում, կադրերի երիտասարդացում
10. Էլեկտրաէներգիայի խնդիրների լուծում	22. Չկան

11. Գազաֆիկացման խնդիրների լուծում	23. Այլ (նշել) _____
12. Ջրահեռացման խնդիրների լուծում	24.Դժվարանում եմ պատասխանել

Q6. Դուք երկար ժամանակ ապրում եք հայ-թուրքական սահմանին հարող բնակավայրում. ի՞նչ է դա նշանակում Ձեզ համար: Որքանո՞վ են նշված դատողություններն արտացոլում Ձեր կարծիքը:

Դատողություններ	Դրական	Բացասական	Դժվարանում եմ պատասխանել
1. Սահմանի փակ լինելը խանգարել է մեր համայնքի զարգացումը բնական ռեսուրսների օգտագործման անհնարինության/սահմանափակման պատճառով:	1	2	3
2. Սահմանի փակ լինելը խանգարել է առևտրաշրջանառությունը, ստեղծել տեղաշարժի խնդիրներ:	1	2	3
3. Սահմանի փակ լինելը հոգեբանական մեծ ճնշում է՝ հիշեցնում կորցրած հայրենիքի և Հայոց ցեղասպանության մասին:	1	2	3
4. Սահմանի փակ լինելը պաշտպանվածության զգացում է ներշնչում:	1	2	3
5. Սահմանի փակ լինելը ապահովագրում է մեր արտադրանքի սպառումը:	1	2	3
6. Սահմանի փակ լինելն ապահովել է հայական մշակույթի պահպանումը:	1	2	3
7. Այլ (նշել)_____	1	2	3

Q7. Այսօր որքանո՞վ է այդ սահմանը պաշտպանված:

1. Լիովին պաշտպանված է
2. Ավելի շուտ պաշտպանված է
3. Ավելի շուտ պաշտպանված չէ
4. Բացարձակապես պաշտպանված չէ
5. Դժվարանում եմ պատասխանել

Q8. Երբևէ որևէ նպատակով՝ ձնկորսություն, հողագործություն, զբոսանք, հատե՞լ եք Ձեր բնակավայրին հարող հայ-թուրքական սահմանը:

1. Այո, պարբերաբար 2. Այո, մեկ անգամ 3. Ոչ, երբեք

Q9. Երբևէ եղե՞լ եք Թուրքիայում, և եթե այո, ի՞նչ նպատակով:

1. Այո, տուրիզմի նպատակով
2. Այո, Արևմտյան Հայաստանը տեսնելու նպատակով
3. Այո, առևտրի նպատակով
4. Այո, աշխատանքային գործուղմամբ
5. Այո, աշխատանք փնտրելու նպատակով
6. Այո, ազգականների/ընկերների հետ տեսակցելու նպատակով
7. Այո, այլ (նշել)_____
8. Ոչ

99. Դժվարանում եմ պատասխանել

Q10. Տեղյա՞կ եք արդյոք, որ արդեն 2023 թ. հունիսի 1-ին հայ-թուրքական ցամաքային սահմանը բացվելու է երրորդ երկրների ներկայացուցիչների (այսինքն՝ օտարերկրացիների) համար՝ Մարգարա – Ալիջան սահմանադռներով:

1. Տեղյակ եմ 2. Որոշ չափով տեղյակ եմ 3. Տեղյակ չեմ 4. Դժվարանում եմ պատասխանել

Q11. Ինչպե՞ս եք վերաբերվում նրան, որ հունիսի 1-ին երրորդ երկրների ներկայացուցիչների համար ենթադրաբար կբացվի հայ-թուրքական ցամաքային սահմանը:

1. Լիովին դրական 3. Ավելի շուտ բացասական 5. Դժվարանում եմ պատասխանել
2. Ավելի շուտ դրական 4. Լիովին բացասական

Q12. Ձեր վերաբերմունքը հայ-թուրքական սահմանի վերաբացման խնդրին:

1. Լիովին կողմ եմ 3. Ավելի շուտ դեմ եմ 5. Դժվարանում եմ պատասխանել
2. Ավելի շուտ կողմ եմ 4. Լիովին դեմ եմ

Q13. Որքանո՞վ եք համաձայն հետևյալ դատողություններին:

Հայ-թուրքական սահմանի վերաբացումը կնպաստի/կհանգեցնի.	Բացարձակապես համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն չեմ	Ավելի շուտ համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Դժվարանում եմ պատասխանել
1. տնտեսական ներդրումների ավելացմանը	1	2	3	4	5
2. զբոսաշրջության զարգացմանը	1	2	3	4	5
3. առևտրաշրջանառության աճին	1	2	3	4	5
4. ենթակառուցվածքների զարգացմանը	1	2	3	4	5
5. ծառայությունների ոլորտի զարգացմանը	1	2	3	4	5
6. անվտանգության ապահովմանը	1	2	3	4	5
7. դիվանագիտական հարաբերությունների բարելավմանը	1	2	3	4	5
8. էժան աշխատուժի ներհոսքի	1	2	3	4	5
9. Թուրքիայի քաղաքացիների՝ ՀՀ ներհոսքին և բնակեցմանը	1	2	3	4	5
10. ՀՀ սահմանամերձ համայնքների դատարկմանը, բնակիչների արտահոսքին	1	2	3	4	5
11. վախի և անվստահության մթնոլորտի, անվտանգային իրավիճակի խախտմանը	1	2	3	4	5
12. թուրքական ապրանքների ներմուծմանը ՀՀ շուկա՝ էքսպանսիայի և մրցակցության թեժացման պատճառ դառնալով	1	2	3	4	5
13. մշակութային էքսպանսիայի, թուրքական մշակույթի գերիշխմանը	1	2	3	4	5
14. պատմական անցյալի մոռացմանը	1	2	3	4	5
15. պետականության կորստի	1	2	3	4	5
16. այլ իրավիճակի (նշել)_____	1	2	3	4	5

Q14. Հայ-թուրքական սահմանի վերաբացման դեպքում կայցելե՞ք Թուրքիա:

1. Այո
2. Ավելի շուտ այո
3. Ավելի շուտ ոչ (*անցնել Q16-ին*)
4. Ոչ (*անցնել Q16-ին*)
5. Դժվարանում եմ պատասխանել

Q15. Եթե այո, ապա ի՞նչ նպատակով:

1. Զբոսաշրջության նպատակով
2. Արևմտյան Հայաստանը տեսնելու նպատակով

3. Պատմական հայրենիքս տեսնելու, պապերիս տունը գտնելու նպատակով
4. Առևտրի նպատակով
5. Աշխատանք գտնելու, աշխատելու նպատակով
6. Ազգականներիս/ընկերներիս հետ տեսակցելու նպատակով
7. Այլ (նշել) _____
8. Դժվարանում եմ պատասխանել

Q16. Որտե՞ղ եք պլանավորում բնակվել, եթե սահմանը բացվի:

1. Կմնամ իմ բնակավայրում
2. Կտեղափոխվեմ մեր մարզի այլ բնակավայր _____
3. Կտեղափոխվեմ այլ մարզ՝ ոչ սահմանամերձ
4. Կտեղափոխվեմ Երևան
5. Կարտագաղթեմ ՌԴ
6. Կարտագաղթեմ հետխորհրդային որևէ այլ երկիր _____
7. Կարտագաղթեմ եվրոպական որևէ երկիր _____
8. Կարտագաղթեմ ԱՄՆ
9. Այլ (նշել)_____
10. Դժվարանում եմ պատասխանել

Q17. Ովքե՞ր են հիմա հսկում հայ-թուրքական սահմանը, և ովքե՞ր, ըստ Ձեզ, պետք է հսկեն սահմանը վերաբացելուց հետո:

	Այսօր	**Սահմանը վերաբացելուց հետո**	**Դժվարանում եմ պատասխանել**
1. ՀՀ սահմանապահ զորքերը	1	2	3
2. Թուրք սահմանապահները	1	2	3
3. ՌԴ սահմանապահները	1	2	3
4. Այլ երկրի սահմանապահները (նշել երկիրը)_____	1	2	3

Q18. Ձեր կարծիքով՝ ի՞նչ պետք է անեն ՀՀ իշխանությունները հայ-թուրքական սահմանի բացումից առաջ:

1. _____

2. _____

3. _____

4. Դժվարանում եմ պատասխանել

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

P1. Ձեր տարիքը. 1. 18-29 2. 30-39 3. 40-49 4. 50-59 5. 60 և ավելի

P2. Ձեր սեռը. *(Չհարցնել)* 1. արական 2. իգական

P3. Ձեր կրթությունը.

1. միջնակարգ 2. միջին մասնագիտական 3. բարձրագույն

P4. Ձեր զբաղմունքը.

1. պետական կառավարման մարմնի աշխատող
2. պետական կազմակերպության աշխատող (դպրոց, բուժհիմնարկություն)
3. մասնավոր կազմակերպության աշխատող
4. ձեռնարկատեր, անհատ ձեռներեց, ինքնազբաղված (արհեստավոր)
5. միջազգային կամ տեղական հասարակական կազմակերպության աշխատող
6. գործազուրկ
7. գյուղատնտեսությամբ զբաղվող
8. տնային տնտեսուհի
9. արտագնա աշխատանքներ կատարող
10. թոշակառու
11. ուսանող
12. այլ (նշել) _____

P5. Քանի՞ հոգուց է բաղկացած Ձեր ընտանիքը: _____

P6. Ամսական միջինում որքա՞ն է կազմում Ձեր ընտանիքի եկամուտը:

1. Մինչև 70.000 ՀՀ դրամ 5. 300.000 – 500.000 ՀՀ դրամ 9. Հրաժարվում եմ պատասխանել

2. 70.000 – 130.000 ՀՀ դրամ 6. 500.000 – 1.000.000 ՀՀ դրամ 10. Դժվարանում եմ պատասխանել
3. 130.000 – 200.000 ՀՀ դրամ 7. 1.000.000 և ավելի ՀՀ դրամ
4. 200.000 – 300.000 ՀՀ դրամ 8.Չունեմ եկամուտ

P7. Ո՞ր քաղաքական ուժին կամ կուսակցությանն եք համակրում/անդամակցում:_____

P8. Ձեր բնակության վայրը:

1. Մարզը _____ 2. Համայնքը/բնակավայրը _____

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1991–2020 թվականներ

Ձախ նկարում՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը և Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը Հրազդան մարզադաշտում դիտում են «Հայաստան-Թուրքիա» ֆուտբոլային հանդիպումը:

Աջ նկարում՝ Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանը և Ահմեդ Դավութօղլուն Ցյուրիխում ստորագրում են դիվանագիտական հարաբերություններ հաստատելու և հարաբերությունները զարգացնելու մասին արձանագրություններ:

Հայաստանի անկախության հռչակումից հետո Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը եղել է Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի առաջնային հարցերից մեկը: Մինչև 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմը այս գործընթացում Հայաստանի հիմնական նպատակը հայ-թուրքական հարաբերությունները հայ-ադրբեջանական օրակարգից տարանջատելն էր և Թուրքիայի հետ կարգավորման առանձին գործընթացի մեկնարկը: Այս ուղղությամբ առավել լուրջ առաջընթաց է գրանցվում 2008–2009 թթ., երբ ինտենսիվ

բանակցություններից հետո կողմերը 2009 թ. հոկտեմբերին ստորագրում են երկկողմ հարաբերությունների կարգավորմանը նվիրված երկու արձանագրություն: Սակայն մի շարք պատճառներով, առաջին հերթին Ադրբեջանի լուրջ դիմադրության հետևանքով, գործընթացը չի հասնում տրամաբանական ավարտին: Թե՛ մինչև 2008–2009 թթ. «ֆուտբոլային դիվանագիտությունը», և թե՛ դրանից հետո, Թուրքիայի դիրքորոշումը եղել է բավականաչափ հստակ՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում հնարավոր է բացառապես հայ-ադրբեջանական բանակցություններում շոշափելի առաջընթաց արձանագրվելու դեպքում:

Միևնույն ժամանակ, վերջին տարիներին և առավելապես 2016 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջման փորձից հետո տարածաշրջանում ուժային հավասարակշռությունը սկսում է էական փոփոխությունների ենթարկվել: Խորհրդային Միության փլուզմանը հաջորդած 20-25 տարիների ընթացքում Հարավային Կովկասում ձևավորվել էր Արևմուտքի և առաջին հերթին Ամերիկայի Միացյալ Նահանգների աջակցությունը վայելող Թուրքիա–Ադրբեջան–Վրաստան ռազմավարական համագործակցությունը: Ռուսաստանն այն հակակշռում էր Հայաստանի հետ ռազմավարական դաշինքով և Հայաստանում ռազմական ներկայությամբ, իսկ Իրանն էլ ընդհանուր առմամբ բավարարված էր Հարավային Կովկասում Ռուսաստանի գերիշխանությամբ:

Սակայն վերջին տարիներին անվտանգային այս համակարգը փոփոխությունների է ենթարկվում առաջին հերթին ռուս-թուրքական հարաբերությունների առումով: Երկու պետությունները սկսում են ուղիներ որոնել՝ տարբեր տարածաշրջաններում հակասություններն արդյունավետորեն կառավարելու և փոխընդունելի լուծումներ գտնելու նպատակով: Դա պայմանավորված էր ինչպես նախագահ Էրդողանի՝ Թուրքիան տարածաշրջանային ինքնուրույն տերության վերածելու ձգտմամբ, այնպես էլ թուրք-ամերիկյան հարաբերություններում լարվածության առաջացմամբ և Ռուսաստան–Արևմուտք հակասությունների խորացմամբ: Թուրքիան և Ռուսաստանն Իրանի հետ գործարկում են Աստանայի ձևաչափը՝ Սիրիայում հակասությունների

կառավարման նպատակով, և այս մոդելի կիրառման ուղղությամբ փորձեր ձեռնարկում այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Հարավային Կովկասում: Տարածաշրջանում անվտանգային միջավայրի էական փոփոխությունը հանգեցնում է 2020 թ. ԼՂ դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմին, որն ավարտվում է Հայաստանի պարտությամբ և Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության փոփոխմամբ:

2021–2023 թվականներ

Արցախյան երկրորդ պատերազմում Հայաստանի կրած պարտությունը և Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ուժային գերակշռության պահպանումն էական բարդություններ են ստեղծել Հայաստանի անվտանգային միջավայրի համար: Ադրբեջանը շարունակում է Հայաստանի դեմ ուժային մեթոդների, ներառյալ՝ Հայաստանի տարածք ներխուժումների պրակտիկան:

2022 թ. փետրվարին ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո Ռուսաստանի համար զգալիորեն մեծացել է Ադրբեջանի և Թուրքիայի նշանակությունը լոգիստիկ նոր երթուղիների գործարկման, պատժամիջոցների շրջանցման և այլ առումներում: Ուկրաինական պատերազմն օբյեկտիվորեն սահմանափակել է նաև Հարավային Կովկասում ակտիվ քաղաքականություն վարելու Ռուսաստանի հնարավորությունները: Ռուս-ուկրաինական պատերազմը հանգեցրել է ԱՄՆ-ի՝ Ռուսաստանի նկատմամբ ռազմավարական զսպման քաղաքականության կիրառմանը, որի հիմնական նպատակներից մեկը հետխորհրդային տարածաշրջանում, այդ թվում՝ Հարավային Կովկասում, Ռուսաստանի ազդեցության նվազեցումն է:

Այս համատեքստում ԱՄՆ-ն միշտ էլ կարևորել է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը՝ այն դիտարկելով Թուրքիայի հանդեպ Հայաստանում առկա վախերի նվազեցման էական գործոն, որն իր հերթին հանգեցնելու է Ռուսաստանի՝ որպես Հայաստանը Թուրքիայից պաշտպանող միակ իրական ուժի ընկալման թուլացմանը: Միևնույն

ժամանակ, Ռուսաստանը ևս կարծես թե դեմ չէ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը՝ այն համարելով դեպի Թուրքիա լոգիստիկ նոր երթուղիների (Ռուսաստան–Ադրբեջան–Հայաստան–Թուրքիա) գործարկման հնարավորություն:

Տարածաշրջանում ուժային հավասարակշռության փոփոխման և Ռուսաստան–Արևմուտք բացահայտ առճակատման պայմաններում 2022 թ. հունվարին պաշտոնապես մեկնարկում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր գործընթացը: Վերջին մեկուկես տարվա ընթացքում Հայաստանի և Թուրքիայի հատուկ բանագնացները մի շարք հանդիպումներ են ունեցել, երկու պետությունների ղեկավարները հանդիպել են 2022 թ. հոկտեմբերին և 2023 թ. հունիսին, ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ, այդ թվում՝ հայ-թուրքական ցամաքային սահմանը երրորդ երկրների քաղաքացիների համար բացելու վերաբերյալ:

Պատկերում՝
Հայաստանի, Թուրքիայի և ԱՄՆ-ի փրկարարները Թուրքիայի Ադիյաման քաղաքում:

Թեև երկու կողմերն էլ պաշտոնապես հայտարարում են առանց նախապայմանների բանակցային գործընթացի մասին, Թուրքիան հստակ դիրքորոշում ունի՝ հայ-թուրքական հարաբերությունների ամբողջական կարգավորումը հնարավոր է բացառապես Հայաստան–Ադրբեջան խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո, ինչը Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաները վերահաստատում են 2023թ. հուլիսի 31-ին Ադրբեջանի արտգործնախարարի՝ Թուրքիա կատարած այցի ժամանակ:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՆԵՐՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում, աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունից բացի, էական նշանակություն ունի նաև հայաստանյան հասարակության հետ հաղորդակցության հաստատումը: Պետք է հաշվի առնել, որ 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմում կրած պարտությունից հետո հասարակության մի զգալի հատվածի շրջանում դեռևս պահպանվում են հետտրավմատիկ սթրեսի ախտանիշները, ինչն արտահայտվում է մի կողմից պետության ապագայի նկատմամբ անտարբերության աճով, մյուս կողմից՝ տագնապի ընկալման աստիճանի բարձրացմամբ: Այս վերջին գործոնը հատկապես ակնհայտ է Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում, երբ հասարակության մի ստվար հատվածի շրջանում առկա է վտանգի զգացողություն:

Շատերը հստակ պատկերացում չունեն այն մասին, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Այստեղ էական դերակատարություն ունի նաև 2020 թ. 44-օրյա պատերազմում Թուրքիայի անմիջական ներգրավվածությունը, որն ուժեղացրել է Թուրքիայից եկող վտանգի զգացողությունը: Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ նախագահի հայտարարությունները Ադրբեջանին աջակցության, «Զանգեզուրի միջանցքի» անհապաղ բացման անհրաժեշտության մասին, էլ ավելի են խորացնում հասարակության շրջանում առկա մտահոգությունները և, հստակ տեղեկատվության բացակայության պայմաններում, տարատեսակ թյուրընկալումների տեղիք տալիս:

Բնականաբար, այս խնդիրներն առավել սուր են Թուրքիային սահմանամերձ մարզերում բնակվող ՀՀ քաղաքացիների համար, որոնք առաջինն են զգալու հայ-թուրքական հարաբերությունների ամբողջական կարգավորման, այդ թվում՝ ցամաքային սահմանի բացման ազդեցությունը, հետևաբար այդ մարզերում անցկացված սոցիոլոգիական

հետազոտությունը չափազանց կարևոր նշանակություն ունի քաղաքացիների շրջանում առկա մտահոգությունների և ընկալումների վերհանման առումով:

Կատարված հետազոտությունը բավականաչափ հետաքրքիր պատկեր է վերհանում: Թուրքիային սահմանակից մարզերում բնակվող ՀՀ քաղաքացիներն ընդհանուր առմամբ բացասական վերաբերմունք ունեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի և դրա հնարավոր հետևանքների նկատմամբ: Միևնույն ժամանակ, սոցիալ-տնտեսական զարգացման առումով համեմատաբար վատ վիճակում գտնվող մարզերի բնակիչներն ավելի շատ են հակված այն տեսակետին, որ հայ-թուրքական սահմանի փակ լինելը բացասական ազդեցություն է ունեցել իրենց վրա, քան առավել բարեկեցիկ տարածաշրջանների բնակիչները: Սահմանի վերաբացմանը ավելի շատ կողմ են համեմատաբար բարձր եկամուտ ունեցող, 30–39 տ. անձինք: Այդուհանդերձ, գրեթե բոլորն անհանգստություն ունեն, որ հայ-թուրքական սահմանի բացումը կարող է հանգեցնել էժան աշխատուժի և Թուրքիայի քաղաքացիների ներհոսքին Հայաստան, ինչի հետևանքով հայկական շուկան կողողվի թուրքական ապրանքներով:

Հատկապես վերջին նկատառումն է հետաքրքրական, քանի որ, անկախ սահմանի բաց կամ փակ լինելուց, հայկական շուկայում առկա են զգալի քանակությամբ թուրքական ապրանքներ, որոնց ներմուծումն արգելվել է շատ կարճ ժամանակով՝ 2020 թ. 44-օրյա պատերազմով պայմանավորված:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ Թուրքիային սահմանակից շրջաններում ապրող ՀՀ քաղաքացիները որոշակի վտանգներ են տեսնում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Դրանք հենված են ինչպես օբյեկտիվ իրողությունների (օրինակ՝ Թուրքիայի բացահայտ աջակցությունն Ադրբեջանին, Թուրքիայի քաղաքական ղեկավարության՝ «Զանգեզուրի միջանցքի» խոսույթի առաջ մղումը), այնպես էլ սուբյեկտիվ ընկալումների վրա (օրինակ՝ ժամանակակից Թուրքիայի քաղաքական և տնտեսական համակարգերի մասին ճշգրիտ պատկերացումների իսպառ բացակայությունը):

Իհարկե, այս գործընթացում զգալի դերակատարություն ունի Ադրբեջանի ուժային ճնշումը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի վրա: «Արևմտյան Ադրբեջան» եզրույթն ամենաբարձր մակարդակով շրջանառության մեջ դնելը, Հայաստանից տարածքների գրավումն ու այլ գործոններ հասարակության լայն շրջանակներում ձևավորում են ընկալումներ, որ Ադրբեջանը չի պատրաստվում բավարարվել միայն Արցախի նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատմամբ, և որ Արցախն Ադրբեջանի համար առաջին քայլն է Հայաստանի Հանրապետությունը կա՛մ իսպառ ոչնչացնելու, կա՛մ առնվազն «արբանյակ» պետության վերածելու ճանապարհին:

Օր օրի ամրապնդվող թուրք-ադրբեջանական դաշինքը շատերի համար ստեղծում է տպավորություն, որ Թուրքիան լիովին աջակցում է Ադրբեջանի այս ռազմավարությանը, հետևաբար Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը մեծացնելու է այս սցենարի իրականացման հավանականությունը:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում առկա խնդիրները (երբ մի կողմից նշվում է, որ նախապայմաններ չկան, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի քաղաքական իշխանությունը հայտարարում է նախապայմանների առկայության մասին առնվազն հայ-ադրբեջանական պայմանագրի ստորագրման հարցում) ևս ավելացնում են հանրության շրջանում առկա կասկածներն ու մտահոգությունները գործընթացի վերաբերյալ: Ձևավորվում է ընկալում, որ հասարակությանը ոչ ամբողջական տեղեկություն է մատուցվում, իսկ դա իր հերթին զանազան կասկածների հիմք է դառնում:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ և ՀՌԵՏՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թ. հունիսի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանի կառավարության դիրքորոշումը հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ հենվում է հարաբերություններն առանց նախապայմանների կարգավորելու թեզի վրա, որն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և տնտեսական զարգացման ապահովման համար: Առաջ է քաշվում այն գաղափարը, որ հայ-թուրքական հարաբերությունների բացակայությունը որոշ ուժեր օգտագործում են Հայաստանի ինքնիշխանությունը և արտաքին քաղաքական ճկունությունը սահմանափակելու համար: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում Հայաստանի պաշտոնական հռետորաբանությունը Թուրքիայի վերաբերյալ հենվում էր հետևյալ տրամաբանության վրա. Թուրքիան պատերազմի անմիջական մասնակից է, վերադարձել է Հարավային Կովկաս՝ ավարտին հասցնելու Հայոց ցեղասպանությունը, և եթե քաղաքակիրթ աշխարհը չկանգնեցնի Արցախի ջախջախումը, ապա դրանից հետո ստիպված կլինի Թուրքիային դիմավորելու արդեն Եվրոպայում, ինչպես դա տեղի է ունեցել 16–17-րդ դարերում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թ. պատերազմից հետո Թուրքիայում իշխանափոխություն տեղի չի ունեցել, և այդ պետությունը շարունակում են ղեկավարել նույն մարդիկ, որոնց Հայաստանի կառավարությունը 2020 թ. աշնանը մեղադրում էր նոր ցեղասպանություն կազմակերպելու համար, 2021 թվականից Թուրքիայի հետ հարաբերությունները կարգավորելու քաղաքականությունը հասարակության որոշ շրջաններում տարակուսանք է առաջացնում:

Ինչո՞ւ և ինչպե՞ս ենք կարգավորելու հարաբերություններն այն պետության հետ, որի նպատակը նոր ցեղասպանություն կազմակերպելն է:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանին Թուրքիայի անվերապահ աջակցությունը, 2021 թ. հունիսին Շուշիի հռչակագրի ստորագրումը որոշակի հարցեր են առաջացնում հայ հասարակության շրջանում: Լաչինի միջանցքի շրջափակումից հետո Հայաստանի կառավարությունն ամենաբարձր մակարդակով բազմիցս հայտարարել է, որ Ադբեջանի նպատակն Արցախում էթնիկ զտումների և ցեղասպանության կազմակերպումն է, իսկ Թուրքիան լիովին աջակցում է Ադրբեջանին Արցախի դեմ տարվող քաղաքականության հարցում:

Պատկերում՝

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի հետ Անկարայում՝ վերջինիս երդմնակալության արարողությունից հետո:

Որոշակի հարցեր են առաջանում նաև բանակցային գործընթացում նախապայմանների առկայության խնդրի առնչությամբ: Հայաստանի կառավարությունը հայտարարում է, որ դրանք առանց նախապայմանների են ընթանում, մինչդեռ Թուրքիայի իշխանությունները՝ նախագահ Էրդողանի մակարդակով, հստակ հայտարարում են, որ հայ-թուրքական հարաբերությունները կարող են կարգավորվել բացառապես հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո, ինչն արդեն իսկ նախապայման է: Երկու պետությունների հրապարակային դիրքորոշումներում առկա անհամապատասխանությունները նույնպես հարցեր են առաջացնում հայ հասարակության շրջանում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկա փուլն ընթանում է տարածաշրջանային և միջազգային անվտանգային ճարտարապետության կերպափոխման պայմաններում, ինչն էականորեն ավելացնում է ինչպես գործընթացի աշխարհաքաղաքական նշանակությունը, այնպես էլ ՀՀ հասարակության շրջանում առկա մտահոգություններն ու կասկածները: Միևնույն ժամանակ, հանրության շրջանում առկա է հստակ տեղեկատվության պակաս գործընթացի, դրանում արձանագրված հաջողությունների, ՀՀ կառավարության դիրքորոշման վերաբերյալ:

Այս հարցում թերևս ամենամեծ խնդիրը նախապայմանների առկայության և դրանց վերաբերյալ ՀՀ կառավարության դիրքորոշման հարցն է: Այստեղ տեղեկատվության պակասը առաջ է բերում տարատեսակ մեկնաբանություններ այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, Հայաստանում թուրքական տնտեսական և ժողովրդագրական հնարավոր էքսպանսիան, իսկ երկարաժամկետ կտրվածքով՝ Թուրքիայի և Ադրբեջանի «հաճախորդ» պետության վերածվելու հեռանկարը:

Այս բոլոր խնդիրները հուզում են հայ հասարակությանը և հանգեցնում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ բացասական դիրքորոշման ձևավորմանը: Կառավարությունից հստակ ազդակներ չստանալով՝ հանրության մի զգալի հատված կա՛մ սկսում է աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական հարցերի շուրջ սեփական վերլուծություններն անել, կա՛մ ներքին և արտաքին տեղեկատվական աղբյուրներին վստահել, որոնք հաճախ տարբեր ուժերի շահեր են սպասարկում և զուրկ են օբյեկտիվությունից:

Այս ամենը մեծացնում է գործընթացի վերաբերյալ հանրության մտահոգությունները, խթանում իրականությունից կտրված գնահատականների տարածումը: Օր օրի բարձրանում է հասարակության տագնապայնության մակարդակը, ինչը բացասաբար է ազդում

Հայաստանի ներքաղաքական կայունության և ներհասարակական համերաշխության վրա:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Պետական քաղաքականության մշակման/բարեփոխման առաջարկներ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ուղղությամբ

Հասարակությանը պետք է ավելի հստակ ներկայացվի հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը. կա՛մ պետք է հանրությանն ուղերձներ փոխանցել, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 2020 թ. հետո Հայաստանի նկատմամբ փոխվել է, և Թուրքիան այլևս նոր ցեղասպանություն կազմակերպելու մտադրություն չունի, կա՛մ ընդունել, որ այդ նարատիվը 2020 թ. պատերազմի ընթացքում օգտագործվել է զուտ քարոզչական նպատակներով և չի արտացոլում Թուրքիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը, կա՛մ փորձել հիմնավորել, թե ինչ օգուտներ կստանա Հայաստանը՝ փորձելով կարգավորել հարաբերությունները մի պետության հետ, որը ենթադրաբար ցանկանում է ոչնչացնել հայերին:

Այս առումով հասարակությանը ներկայացվող փաստարկներից մեկը կարող է լինել այն, որ, թեև Թուրքիայի փաստացի հակահայկական քաղաքականության ծավալմանը, հարաբերությունների կարգավորման գործընթացի շարունակումը մեծացնում է Հայաստանի դրական իմիջն արտերկրում, առաջին հերթին մեր արևմտյան գործընկերների շրջանում, որպես կառուցողական և տարածաշրջանում երկարաժամկետ կայունության ձգտող պետության: Միևնույն ժամանակ, նպատակահարմար է հասարակությանն ուղերձներ հղել, որ քանի դեռ Թուրքիան չի փոխել իր քաղաքականությունը Հայաստանի և Արցախի նկատմամբ, հարաբերությունների կարգավորման հավանականությունը չափազանց փոքր է, և այս հարցում չպետք է ունենալ չարդարացված սպասումներ:

Այս համատեքստում կառավարության՝ հասարակությանը փոխանցելիք ուղերձներից մեկը կարող է լինել այն հանգամանքի շեշտադրումը, որ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացի շարունակմամբ Հայաստանը փորձում է տարանջատել հայ-թուրքական և հայ-ադրբեջանական հարաբերությունները և խնդիրներ ստեղծել Ադրբեջան–Թուրքիա համագործակցության համար, թեև անհրաժեշտ կլինի նշել նաև, որ նման արդյունքի հասնելը քիչ հավանական է:

Որոշակիություն է անհրաժեշտ նաև հայ-թուրքական ցամաքային սահմանի բացման տնտեսական հետևանքների վերաբերյալ. այստեղ ևս բացակայում է հստակ ռազմավարությունը: Մի կողմից հնչում են պնդումներ, որ սահմանի բացումը Հայաստանի տնտեսության համար կունենա դրական հետևանքներ՝ նպաստելով ՀՆԱ-ի կտրուկ աճին, մյուս կողմից՝ լուրջ մտահոգություններ կան, որ ներքին շուկան թուրքական ապրանքներով կողողվի, թուրքական ընկերությունները գերիշխող կդառնան: Այստեղ ևս կառավարությունը պետք է հստակություն մտցնի, ինչպես օրինակ՝ միջազգային հեղինակավոր կազմակերպություններից մեկին այս խնդրի վերաբերյալ նոր հետազոտություն պատվիրի, որը հաշվի կառնի նաև ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված փոփոխությունները:

Առաջարկներ՝ ուղղված քաղաքացիների կոնկրետ մտավախությունների հասցեագրմանը

Անհրաժեշտ է հասարակությանը հստակ ուղերձներ փոխանցել, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը չի նշանակում վիզայի ազատականացման ռեժիմի հաստատում Թուրքիայի հետ. Թուրքիայի քաղաքացիները Հայաստան կարող են մուտք գործել բացառապես վիզայի առկայության դեպքում, ինչը Հայաստանի կառավարությանը հնարավորություն է տալիս կարգավորելու քաղաքացիների հոսքը: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հարաբերությունների կարգավորումը և ցամաքային սահմանի բացումն

էական փոփոխություններ չեն մտցնելու Թուրքիայից Հայաստան ուղևորափոխադրումների հոսքում, քանի որ այս պահին էլ Թուրքիայի քաղաքացիները կարող են Հայաստան մուտք գործել թե՛ օդային և թե՛ ցամաքային ճանապարհով՝ Վրաստանի տարածքով:

Ինչ վերաբերում է անշարժ գույքի առքուվաճառքին, ապա այստեղ ևս անհրաժեշտ են հստակ ուղերձներ հասարակությանը՝ առաջին հերթին սահմանամերձ համայնքներում բնակվող քաղաքացիներին, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը և ցամաքային սահմանի բացումը որևէ փոփոխության չեն բերելու Թուրքիայի քաղաքացիների՝ Հայաստանում անշարժ գույք ձեռք բերելու գործընթացում:

Ընդհանուր միջավայրի բարելավմանն ուղղված քայլեր

Հասարակությանը պարբերաբար տրամադրել տեղեկություն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ: Այդ նպատակով դիտարկել ՀՀ հատուկ բանագնացի կամ պաշտոնատար այլ անձի՝ առնվազն երկու ամիսը մեկ մամուլի ասուլիսի կազմակերպումը կամ առաջատար հեռուստաընկերություններին հարցազրույցի տրամադրումը:

Հայ հասարակության շրջանում բարձրացնել ժամանակակից Թուրքիայի քաղաքական և տնտեսական համակարգի վերաբերյալ առկա ընկալումների մակարդակը: Այդ նպատակով դիտարկել տարբեր մեդիահարթակներում Թուրքիային առնչվող քննարկումների, Թուրքիա լրագրողների և այլ մասնագետների հավելյալ այցելությունների կազմակերպման, դրանց արդյունքների հնարավորինս լայն հանրայնացման հնարավորությունը:

Քննարկել Թուրքիային սահմանակից մարզերի հանրային հաստատությունների և բնակչության հետ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացի առնչությամբ

կատարվող աշխատանքը համակարգող պաշտոնատար անձի նշանակման հնարավորությունը:

Նշված մարզերի կենտրոններում և սահմանին առավել մոտ գտնվող համայնքներում երկու ամիսը մեկ պաշտոնատար անձանց հանդիպումներ կազմակերպել բնակիչների հետ՝ վերջիններիս հուզող հարցերին պատասխանելու, առկա իրավիճակի և խնդիրների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նկարում՝ Մարդասիրական օգնությամբ բեռնված հայկական բեռնատարը Մարգարայի կամրջով հատում է Հայաստանի և Թուրքիայի միջևեպատական սահմանը, 2023 թվական

Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային սահմանը փակվել է Խորհրդային միության փլուզումից գրեթե անմիջապես հետո՝ 1993 թ. ապրիլին, որին արդեն նախորդել էր Թուրքիայից Հայաստան էլեկտրաէներգիայի մատակարարման դադարեցումը 1992 թ. դեկտեմբերին: Արցախյան առաջին պատերազմի ընթացքում Թուրքիայի գործողությունները վերահաստատում են իր դիրքորոշումը հակամարտության մեջ Ադրբեջանին սատար կանգնելու հարցում և սեպ խրում հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորման

գործում: Դրան գումարվում են նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված գործողությունները, որոնք էլ պատճառ բերելով՝ Թուրքիան հրաժարվում է Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց, թեև վերջինիս անկախությունը ճանաչել էր դեռևս 1991 թ.:



Գծապատկեր 1.

Հայաստանի և Թուրքիայի միջև առևտուրը 2015–2022 թթ.[1]

Այնուամենայնիվ, անգամ ցամաքային փակ սահմանների և երկկողմ առևտրի կարգավորման իրավական շրջանակների բացակայության պարագայում Հայաստանի և Թուրքիայի միջև առևտուր եղել է և տարիների ընթացքում էականորեն ընդլայնվել է: Ընդ որում՝ Հայաստան–Թուրքիա առևտրում Հայաստանը մեծապես հանդես է եկել որպես ներմուծող կողմ, և հայկական շուկան աստիճանաբար մեծ կախվածություն է ձեռք բերել թուրքական ծագման որոշ ապրանքների ներմուծումից:

Այսպես, եթե 2000 թ. Թուրքիայից Հայաստան է ներմուծվել 29 մլն ԱՄՆ դոլարի ապրանք, ապա 2022 թ. ներմուծման ծավալները հասել են մինչև 262 մլն ԱՄՆ դոլարի: Նույն տարում Թուրքիայի մասնաբաժինը Հայաստանի ներմուծման մեջ կազմել է շուրջ 3%, այնինչ վերջին տարիներին (2015–2022)

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ https://www.trademap.org/ տվյալների շտեմարանի հիման վրա:

Հայաստանի ներմուծումը Թուրքիայից միջինում կազմել է ընդհանուր ներմուծման 4,4%-ը: Մյուս կողմից՝ 2022 թ. Թուրքիայի ընդհանուր արտահանումը կազմել է շուրջ 254 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ *դեպի Հայաստան արտահանումը կազմել է Թուրքիայի ընդհանուր արտահանման ընդամենը 0,1%-ը*[2]*:*

Թուրքիայից Հայաստան ներմուծումն ընդգրկում է ապրանքախմբերի լայն տեսականի, իսկ որոշ ապրանքների՝ Թուրքիայից ներմուծումը կազմում է ընդհանուր ներմուծման ահռելի բաժինը: 2022 թ., մասնավորապես Թուրքիայից Հայաստան ներմուծման ապրանքային խմբի կառուցվածքում առաջատար դիրք է գրավել «Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, մեքենաներ և մեխանիկական սարքեր, դրանց մասեր» ապրանքախմբի ներմուծումը (Թուրքիայից ներմուծման 11,6%-ը կամ 30 մլն ԱՄՆ դոլար): Այս ապրանքախմբի հիմնական ներմուծվող ապրանքները եղել են արտադրական մեքենա-սարքավորումները, պոմպերը, կենցաղային սարքավորումները, ջեռուցման կաթսաները ևն: Թեև 2022 թ. Թուրքիայից նշված ապրանքախմբի ներմուծման ծավալները համադրելի են նախորդ տարիների ցուցանիշների հետ (բացառությամբ 2020 թվականի, երբ ներմուծման սահմանափակումների պարագայում այդ ապրանքախմբի ներմուծումը նախորդող տարվա համեմատությամ կրճատվել էր 60%-ով), հարկ է նշել, որ այս ապրանքախմբի ընդհանուր ներմուծումը Հայաստան 2022 թ. նախորդող տարվա համեմատությամբ աճել է 66%-ով: Միևնույն ժամանակ, Հայաստանից նույն ապրանքախմբի արտահանումը 2022 թ. նախորդող տարվա համեմատությամբ աճել է շուրջ 600%-ով, իսկ ավելի քան 90%-ն ուղղվել է Ռուսաստան և Բելառուս (տարեկան աճը՝ համապատասխանաբար 10 և 30 անգամ):

Մեծ տեսակարար կշիռ է ունեցել նաև հագուստի և կտորեղենի ներմուծումը (երեք ապրանքային խումբ, միասին՝ շուրջ 41 մլն ԱՄՆ դոլար կամ Թուրքիայից ներմուծման 16%-ը): Կախվածությունն առավել ակնհայտ է մրգի և բանջարեղենի ներմուծման պարագայում. Թուրքիայից լոլիկի ներմուծումը կազմում է Հայաստանի ընդհանուր ներմուծման 83%-ը, այլ

[2] Հետազոտության մեջ օգտագործվող՝ Հայաստան–Թուրքիա փոխադարձ առևտրի տվյալները վերցվել են https://www.trademap.org/ տվյալների շտեմարանից:

թարմ և պաղեցրած բանջարեղենի ներմուծումը՝ 55%-ը, թարմ կամ չորացրած ցիտրուսային պտուղների ներմուծումը՝ 44%-ը, ևն:

Թուրքիայից ներմուծման կայուն աճի ֆոնին 2021 թ. ներմուծման ծավալները նախորդող տարվա համեմատությամբ նվազել են 68,4%-ով և կազմել 72,7 մլն ԱՄՆ դոլար, ինչը պայմանավորված է եղել թուրքական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքների ներմուծման վրա ՀՀ կառավարության կիրառած ժամանակավոր արգելքով[3], որը գործել է 2021 թ. հունվարի 1-ից մինչև տարեվերջ: Կիրառված արգելքի պայմաններում տեղական տնտեսավարողներն ի զորու եղան ակտիվորեն վերափոխելու ներմուծման աշխարհագրությունը՝ հագուստի առարկաների դեպքում վերակողմնորոշվելով դեպի Հունաստան, Պորտուգալիա, Բանգլադեշ, ցիտրուսային պտուղների դեպքում՝ Եգիպտոս, Չինաստան, Պակիստան, լվացող և մաքրող միջոցների դեպքում՝ Վրաստան, Չեխիա, Հնդկաստան[4]: Հարկ է նկատի ունենալ, որ *Թուրքիայից ներմուծվող վերջնական սպառման ապրանքների թվում առկա են այնպիսիք, որոնց թողարկումը Հայաստանում անիրատեսական չէ և ահռելի ներդրումներ չի պահանջում:*

Ինչ վերաբերում է արտահանմանը, ապա Թուրքիան Հայաստանի արտահանման առաջատար ուղղություններից չէ: 2015–2022 թթ. Հայաստանի արտահանումը դեպի Թուրքիա միջինում կազմել է ընդհանուր արտահանման 0,2%-ը: Արտահանման առավելագույն ծավալը գրանցվել է 2022 թ.՝ մոտ 61 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր արտահանման 1,1%-ը), որը 44 անգամ ավելին է 2015 թ. արձանագրված ցուցանիշից: Նույն տարում գրեթե ամբողջ արտահանումը կազմել է «բնական կամ մշակված մարգարիտներ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ, թանկարժեք մետաղներով երեսպատված մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանումը (ընդհանուր արտահանման 99%-ը): Բացի այդ՝ վերջին տարիներին Հայաստանից Թուրքիա արտահանվող հիմնական ապրանքներն են եղել չմշակված մորթիները (բացի բնական

[3] Տե՛ս՝ ՀՀ կառավարության 2020 թ. հոկտեմբերի 20-ի N 1708-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին»:

[4] **Ա. Փախլյան և ուրիշներ**, Թուրքիայի կողմից Հայաստանի ապաշրջափակման հնարավորություններն ու մարտահրավերները, «Տնտեսագետ», «Ամբերդ» մատենաշար 57, Եր., 2022, էջ 189:

մորթուց), մշակված կաշին, ժամացույցները և դրանց մասերը, օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական գործիքները և ապարատները, դրանց մասերը և պարագաները, ինչպես նաև ոսկերչական արտադրատեսակները և դրանց մասերը: *2022 թ. Հայաստանից դեպի Թուրքիա արտահանված ապրանքները կազմել են Թուրքիայի ողջ ներմուծման 0,01%-ը:*

Այսպիսով, երկու երկրների փոխադարձ առևտրի վերլուծությունները ցույց են տալիս, *որ փակ սահմանների պարագայում Հայաստան–Թուրքիա առևտրում Հայաստանը հանդես է գալիս որպես ներմուծող երկիր, Թուրքիան՝ արտահանող:* Ավելին՝ վերլուծությունները վկայում են, որ Հայաստանի և Թուրքիայի միջև բարդ հարաբերությունների պատճառով առևտուրը եղել է հիմնականում միջնորդավորված սխեմաների միջոցով, ինչը, բնականաբար, լրացուցիչ ծախսեր է պահանջում: Սակայն, ո՛չ ներկրման գաղտնի սխեմաների անհրաժեշտությունը, ո՛չ հավելյալ ծախսերը չեն հանգեցրել թուրքական ապրանքների ներմուծման սահմանափակման, ինչն անշուշտ վկայում է երկու երկրների միջև առևտրի չիրացված ներուժի մասին[5]:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման առաջին փորձն արվել է 2008 թ. «ֆուտբոլային դիվանագիտության» մեկնարկով, որը, սակայն, ձախողվել է՝ կողմերի միջև առանց նախապայմանների սկզբունքի հիման վրա հարաբերությունների կարգավորման հարցում ընդհանուր հայտարարի չգալով պայմանավորված:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ավարտից հետո էականորեն մեծանում է Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանի աշխարհաքաղաքական կյանքում: Առաջ է քաշվում տարածաշրջանում համագործակցության նոր՝ «3+3» ձևաչափի ստեղծման գաղափարը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Իրանի և Վրաստանի մասնակցությամբ: Տարածաշրջանային զարգացումներին զուգահեռ՝ կրկին ակտիվանում է հայ-թուրքական հարաբերությունների

[5] Նույն տեղում:

կարգավորման գործընթացը՝ ընդհուպ հատուկ բանագնացների նշանակմամբ և որոշ հանդիպումների կազմակերպմամբ:



Գծապատկեր 2.

Հարցման մասնակիցների դիրքորոշումը հայ-թուրքական ցամաքային սահմանի վերաբացման վերաբերյալ[6]

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ու հայ-թուրքական ցամաքային սահմանի գործարկմանն ընդառաջ՝ Լիբերալ քաղաքականության ինստիտուտը 2023 թ. մայիս ամսից «Էմպիրիկա» հետազոտական ընկերության և Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի աջակցությամբ հարցում է անցկացրել հայ-թուրքական սահմանին գտնվող համայնքների բնակիչների շրջանում՝ պարզելու բնակչության անհանգստություններն ու մոտեցումները սահմանի հնարավոր վերաբացման հարցի վերաբերյալ: Հարցման շրջանակն ընդգրկել է Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի 400 չափահաս բնակիչ, որոնցից 45%-ն արական սեռի ներկայացուցիչներ են, 55%-ը՝ իգական:

Նախքան հարցման առանձին ուղղություններին անցնելը նշենք, որ *հարցվածների գերակշիռ մասը՝ 63,5%-ը, լիովին կամ ավելի շուտ դեմ է հայ-*

[6] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ «Էմպիրիկա» հետազոտական ընկերության անցկացրած հարցումների տվյալների հիման վրա:

թուրքական ցամաքային սահմանի վերաբացմանը, իսկ լիովին կամ ավելի շուտ կողմ է հարցվածների 29,1%-ը (տե՛ս՝ *Գծապատկեր 2.*):



Գծապատկեր 3.

Հարցման մասնակիցների զբաղվածությունը[7]

Հարցվածների 33,75%-ը չի աշխատում, իսկ մնացած 66,25%-ն ունի զբաղվածություն տարբեր ոլորտներում. հատկանշական է, որ հարցվածների 42%-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ (տե՛ս՝ *Գծապատկեր 3.*) և կարող է լինել Հայաստան–Թուրքիա առևտրի հետագա ակտիվացման առաջնային ազդակիրը՝ հաշվի առնելով գյուղատնտեսական ապրանքների կշիռը Թուրքիայից Հայաստան ներմուծման մեջ:

Ըստ ամենատարբեր աղբյուրների՝ Արևելյան Անատոլիայի (պատմական Արևմտյան Հայաստան) բնակչության շուրջ 80%-ը կամ 3,7 մլն մարդ քուրդ է. նրանց սոցիալական վիճակը գնահատվում է ծանր: Սահմանների հնարավոր բացումը կարող է ենթադրել քրդերի աշխատանքային միգրացիայի ակտիվացում: Ներգաղթյալները հնարավորություն կունենան նույն գյուղատնտեսական վարձու աշխատանքներն ավելի ցածր վճարի դիմաց կատարել՝ որպես էժան

[7] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ «Էմպիրիկա» հետազոտական ընկերության անցկացրած հարցումների տվյալների հիման վրա:

աշխատուժ, ինչն էլ իր հերթին կառաջացնի խոչընդոտներ տեղացիների զբաղվածության համար: Հարկ է նշել, որ հարցվածների 12,6%-ը որպես հրատապ լուծման հիմնախնդիր նշել է աշխատատեղերի ապահովումը և գործազրկության մակարդակի կրճատումը, հետևաբար հարցվածների շրջանում արդեն իսկ առկա են ներքին միգրացիայի վերաբերյալ մտավախություններ: Սահմանամերձ համայնքների բնակչությունը, հատկապես՝ երիտասարդ, աշխատանք փնտրելու համար տեղափոխվելով այլ համայնքներ, ավելի կհեշտացնի քրդերի ինտեգրացիան: Այնուամենայնիվ, հարցվածների շուրջ 90%-ը չի պլանավորում լքել իր բնակավայրը սահմանների հնարավոր վերաբացման դեպքում:

Հարցումն անդրադարձել է նաև էժան աշխատուժի հնարավոր ներհոսքի խնդրին, և հարցվածների 68,6%-ը համաձայն է եղել այդ մտքին: Ավելին՝ սահմանի վերաբացմանը թե՛ դեմ, թե՛ կողմ արտահայտվածների գերակշիռ մասն էժան աշխատուժի ներհոսքը հավանական է համարում:

Մյուս կողմից՝ հարցվածների ավելի քան 60%-ի ընտանիքի ամսական միջին եկամուտը կազմում է մինչև 130.000 ՀՀ դրամ, իսկ ընտանիքի անդամների միջին թիվը՝ 5: Համաձայն «livingcost.org» կայքի հաշվարկների՝ Կարսում մինչև 4 հոգուց բաղկացած ընտանիքի միջին աշխատավարձն առանց հարկերի կազմում է 225 ԱՄՆ դոլար[8] (մոտ 90.000 ՀՀ դրամ), ինչը ևս մեկ անգամ արտացոլում է Թուրքիայի արևելյան սահմանամերձ շրջանների քուրդ բնակչության հնարավոր մոտիվացիան աշխատանքի նպատակով Հայաստան տեղափոխվելու:

Ինչ վերաբերում է երկրի ու համայնքների խնդիրների առանձնացմանը, հարցվածների շրջանում պատասխանների արտասովոր և անկանխատեսելի պատկեր չի գրանցվել. խաղաղության ու անվտանգության ապահովման հարցերին զուգահեռ՝ բնակիչները բարձրաձայնել են երկրի ու համայնքի մակարդակով տնտեսական կայուն զարգացման, աշխատատեղերի ստեղծման ու բարեկեցության ապահովման հարցերը: Ասել, որ հարցվածների շրջանում լիովին առկա է

[8] Livingcost, Turkey, Kars https://livingcost.org/cost/turkey/kars

այն ընկալումը, որ սահմանամերձ համայնքների զարգացվածության մակարդակն էապես պայմանավորված է փակ սահմաններով, ամբողջովին փաստարկված չէ, թեև հարցվածների շուրջ մեկ երրորդն այն համոզմունքն ունի, որ սահմանների փակ լինելը խանգարել է իրենց համայնքի զարգացմանը՝ բնական ռեսուրսների օգտագործման անհնարինության կամ սահմանափակման պատճառով, առևտրաշրջանառությանը, ստեղծել տեղաշարժի խնդիրներ:

Մյուս կողմից՝ հատկանշական է, որ հարցվածների ավելի քան 70%-ը կարծում է, որ սահմանի փակ լինելն ապահովագրում է տեղական արտադրանքի սպառումը: Կարելի է ենթադրել, որ խոսքն առաջին հերթին գյուղատնտեսական որոշ ապրանքների մասին է, և սահմանների բացման պարագայում սահմանամերձ համայնքների բնակիչները կառավարությունից կակնկալեն գործուն քայլեր՝ ուղղված տեղական արտադրանքի իրացմանը[9]: Այլ կերպ ասած՝ գյուղատնտեսական արտադրանքի առևտրային «պատերազմում» բնակչության մտահոգությունները մեղմելու ակնկալվող տարբերակը հովանավորչության գործիքների կիրառումն է, որը մի շարք սահմանափակումներ ունի՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն (ԱՀԿ) անդամակցությամբ:

Բանն այն է, որ ԱՀԿ-ին Հայաստանի անդամակցության պահին Թուրքիան կիրառել է ԱՀԿ համաձայնագրի 13-րդ հոդվածը՝ իրավական հիմքերով ազատվելով Հայաստանի՝ որպես մեկ այլ ԱՀԿ անդամի նկատմամբ միջազգային առևտրի կանոնների կիրառման պարտավորվածությունից, ինչը ենթադրում է հրաժարում ոչ միայն Հայաստանի նկատմամբ առևտրի թափանցիկ ու ոչ խտրական սկզբունքների, այլև մաքսատուրքերի ֆիքսված դրույքաչափերի կիրառումից: Հայաստանը, այնուամենայնիվ, անդամակցության պահին չի կիրառել նշված դրույթը, և հետագայում երկկողմ առևտրի կարգավորման

[9] Այն հարցին, թե ինչ պետք է անեն ՀՀ իշխանությունները հայ-թուրքական սահմանը բացելուց առաջ, հարցվածներն հիշատակել են անգամ գյուղատնտեսական ապրանքների ներմուծման համար մաքսատուրքի սահմանման անհրաժեշտությունը, որոնք Հայաստանում կարող են աճեցնել և վաճառել:

գործող ռեժիմից (Հայաստանի և Թուրքիայի միջև այսօր փաստացիորեն չկա գործող առևտրային ռեժիմ՝ անհրաժեշտ իրավական կարգավորումներով) մեկ այլ՝ ոչ բարենպաստ ռեժիմի անցումը պետք է ուղեկցվի նաև ԱՀԿ համաձայնագրի 13-րդ հոդվածի կիրառմամբ, որի նպատակով կպահանջվեն հավելյալ ընթացակարգեր, այդ թվում՝ ԱՀԿ նախարարական համաժողովի համապատասխան հանձնարարականների ստացում:

Հայաստանը Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ երկիր է, և երրորդ երկրների հետ առևտրի կարգավորումները պետք է համաձայնեցվեն ԵԱՏՄ անդամ մյուս երկրների հետ, իսկ ԱՀԿ համաձայնագրի շրջանակում բանակցությունները պետք է վարի ոչ թե առանձին երկիր, այլ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը՝ հաստատված կազմով: Ինչ վերաբերում է թուրքական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքների ներմուծման նկատմամբ ՀՀ կառավարության 2020 թ. կիրառած ժամանակավոր արգելքին, ապա այն համաձայնեցված է եղել ԵԱՏՄ երկրների հետ. ԵԱՏՄ օրենսդրությունը հնարավորություն է տալիս երրորդ երկրների համար ոչ սակագնային սահմանափակումներ և կարգավորումներ կիրառելու վեց ամիս ժամկետով:

Մյուս կողմից՝ Թուրքիան Եվրոպական միության (ԵՄ) մաքսային միության անդամ երկիր է, և Հայաստան–Թուրքիա առևտրային ռեժիմի հաստատման հնարավոր բանակցությունները, ըստ էության, պետք է տարվեն ԵՄ և ԵԱՏՄ պատվիրակությունների միջև, իսկ գործընթացին անշուշտ կգումարվի Ռուսաստան–Արևմուտք աշխարհաքաղաքական բաղադրիչը:

Հատկանշական է նաև այն, որ դրական համահարաբերություն է առկա հարցվածների եկամտի չափի և սահմանի վերաբացման վերաբերյալ դիրքորոշման միջև. որքան բարձր է հարցված անձանց եկամուտը, այնքան ավելի մեծ է նրանց հակվածությունը կողմ լինելու սահմանի վերաբացմանը (տե՛ս՝ *Գծապատկեր 4.*):

Հարցվածների շրջանում առկա է նաև այն մտահոգությունը, որ սահմանների վերաբացումը և հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների ակտիվացումն առաջ կբերեն թուրքական կապիտալի ներհոսքին դեպի Հայաստան՝ զգալիորեն մեծացնելով ազգային տնտեսության կախվածությունը թուրքական կապիտալից: Այնուամենայնիվ, անկախությունից ի վեր Թուրքիան Հայաստանում առաջատար ներդրողներից չէ, և պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 1998–2022 թթ. Թուրքիայից Հայաստանի տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 775 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր ներդրումների 0,01%-ը[10]: Անկախության տարիներին Հայաստանում գրանցվել է թուրքական կապիտալի մասնակցությամբ 139 ընկերություն, որոնցից 91-ը շարունակում են գործել[11]:



Գծապատկեր 4.

Հարցման մասնակիցների ընտանիքի ամսական միջին եկամտի չափի և հայ-թուրքական ցամաքային սահմանի վերաբացմանը հակվածության միջև փոխկապվածությունը[12]

[10] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե:
[11] Աղբյուրը՝ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր:
[12] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից՝ «Էմպիրիկա» հետազոտական ընկերության կողմից իրականացված հարցումների տվյալների հիման վրա:

Անդրադարձ է կատարվել նաև սահմանների բացման պարագայում զբոսաշրջության հոսքերի ավելացմանը: Հարցվածների գրեթե մեկ երրորդը համաձայն է, որ սահմանների բացումը կնպաստի ներգնա զբոսաշրջության զարգացմանը, այսինքն՝ Թուրքիայի քաղաքացիների զբոսաշրջային հոսքը դեպի Հայաստան կմեծանա: Հարկ է նկատի ունենալ, որ այսօր թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի քաղաքացիներից մուտքի արտոնագիր է պահանջվում, որը, սակայն, հնարավոր է ստանալ էլեկտրոնային եղանակով՝ պետական ոչ մեծ տուրքի վճարմամբ: Միակ խնդիրը զբոսաշրջային երթուղու, հետևաբար նաև ծախսերի ավելացումն է Վրաստանի տարածքով տարանցման պարագայում, եթե օգտվում ենք ցամաքային տրանսպորտից, իսկ օդային տրանսպորտից օգտվելու դեպքում խնդիրն առնչվում է Հայաստան–Թուրքիա չվերթների առկայության հետ: Բացի այդ՝ կարող է ակտիվանալ նաև Հայաստանից զբոսաշրջության հոսքը դեպի Թուրքիա՝ պայմանավորված պատմական Արևմտյան Հայաստանի տարածքը տեսնելու ցանկությամբ և առավել մատչելի հնարավորությամբ:

Այսպիսով, հայ-թուրքական ցամաքային սահմանի վերաբացման հնարավոր հետևանքների ու խնդիրների շուրջ Թուրքիային սահմանամերձ համայնքների բնակչության մտահոգությունների ուսումնասիրությունից կարող ենք հանգել հետևյալ ***եզրակացություններին***.

1. Հայ-թուրքական սահմանի փակ լինելու հանգամանքն իսկապես սահմանափակել է Հայաստանի տնտեսական պոտենցիալի ընդլայնումը մի շարք ուղիներով: Նախ՝ լոգիստիկ ենթակառուցվածքների սահմանափակումներն ինքնաբերաբար «բարձրացրել են» արտաքին առևտրի արժեքը և հայկական արտադրանքը դարձրել պակաս մրցակցային այլ շուկաներում: Հավանական ներդրողների շրջանում հայ-թուրքական սառեցված հակամարտությունն ու ոչ բարիդրացիական հարաբերությունները մասամբ հետ են պահել լայնամասշտաբ ներդրումային ծրագրերի իրականացման գաղափարից, հատկապես սահմանամերձ հատվածներում: Թեև Թուրքիայի արևելյան շրջաններն իրենց տնտեսական զարգացման մակարդակով զգալիորեն հետ են մնում

արևմտյան հատվածից, այնուամենայնիվ, խնդրից առավել տուժել է Հայաստանը՝ որպես փոքր և զգայուն տնտեսություն: Ավելին՝ երբ Հայաստանի պարագայում գումարվում են արևելյան սահմանի փակ լինելու հանգամանքն ու արտաքին աշխարհին կապող սահմանափակ ուղիները Վրաստանի ու Իրանի միջոցով, պատկերն առավել մտահոգիչ է դառնում:

2. Հայ-թուրքական սահմանի բացումը և տարածաշրջանում տրանսպորտային հաղորդակցության ապաշրջափակումն ինչպես հավելյալ արդյունքներ, այնպես էլ ծախսեր են նախատեսում տարածաշրջանի բոլոր երկրների համար, ընդ որում՝ հետևանքները տարբեր կլինեն բոլորի համար:
3. Թեև տրանսպորտային հաղորդակցության վերաբացումը կստեղծի ցամաքային (այդ թվում՝ երկաթուղային) այլընտրանքային երթուղիներ (այդ թվում՝ տարանցիկ), Հայաստանի տնտեսությունն արդեն հարմարեցված է առկա է սահմանափակումներին, և նոր լոգիստիկ ենթակառուցվածքների անցումը հավելյալ ժամանակ ու ֆինանսական ռեսուրսներ կպահանջի: Հետևաբար, սահմանների հնարավոր վերաբացման պարագայում նպատակադրվող քաղաքականությունները պետք է ուղղվեն արտահանման ծավալների մեծացմանն ու թիրախային շուկաների բազմազանացմանը՝ փոխհատուցելով առաջ եկող ֆինանսական այլ կարիքները:
4. Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական «պայթյունավտանգ» հարաբերությունների պայմաններում Թուրքիան և Ադրբեջանը ջանք չեն խնայել մոբիլիզացնելու ֆինանսական ահռելի միջոցներ և մեկնարկելու տարածաշրջանային մեգածրագրեր առանց Հայաստանի ներգրավման (Կարս–Ախալքալաք–Թբիլիսի–Բաքու երկաթուղի, Բաքու–Թբիլիսի–Ջեյհան նավթամուղ, Հարավկովկասյան գազամուղ ևն): Նմանօրինակ ծրագրերի առկայություն արդեն սահմանափակում է տարածաշրջանային նախաձեռնություններին Հայաստանի հնարավոր շահեկան մասնակցությունը տրանսպորտային հաղորդակցության ապաշրջափակման դեպքում:

5. Հայաստան–Թուրքիա առևտրի իրական ծավալները հավաստիության առումով որոշակի անորոշություններ են պարունակում՝ պայմանավորված միջնորդավորված առևտրով: Ասվածն առավել հիմնավորվում է երկկողմ առևտրի վերաբերյալ Հայաստանի և Թուրքիայի պաշտոնական վիճակագրության ակնհայտ անհամադրելիությամբ:
6. Հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ Թուրքիային սահմանամերձ բնակավայրերում առկա չէ միանշանակ մոտեցում սահմանների վերաբացման հարցի վերաբերյալ: Կարելի է առնվազն ենթադրել, որ, անկախ սահմանի վերաբացմանը կողմ կամ դեմ լինելու հակվածությունից, քաղաքացիներն ունեն որոշակի պատկերացում գործընթացի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների մասին: Ինչ վերաբերում է սահմանի վերաբացման գործընթացի շրջանակում իշխանություններից ակնկալվող գործողություններին, բնակիչներն առաջնահերթ են համարել բացառապես անվտանգության ապահովումը, ապա նոր միայն անդրադարձել սոցիալ-տնտեսական բարեկեցությանն առնչվող հարցերին:
7. Եվ ամենակարևորը. *թեև մի շարք տարածաշրջաններում պատմականորեն կայուն տնտեսական ամուր կապերն են երաշխավորել քաղաքական կայունությունն ու խաղաղությունը, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում տնտեսական համագործակցության ակտիվացումն ընդհանուր գործընթացի միայն մեկ բաղադրիչն է, և չպետք է ամբողջ գործընթացը պայմանավորել տնտեսական հետևանքներով: Այլ կերպ ասած՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը նախևառաջ պահանջում է աշխարհաքաղաքական վերլուծությունների կատարում և քաղաքական որոշումների կայացում:*

Վերոշարադրյալը հաշվի առնելով՝ կարող ենք ձևակերպել հետևյալ ***առաջարկները***.

1. Հայ-թուրքական ցամաքային սահմանի հնարավոր վերաբացումը պետք է ուղեկցվի իրավական հենքի հստակ սահմանմամբ, որը կերաշխավորի տրանսպորտային հաղորդակցության, սահմանային հսկողության, բեռնափոխադրման ընթացակարգերի արդյունավետ կարգավորումը՝ հզորացնելով մաքսային և սահմանային վերահսկողական մեխանիզմները:
2. Նախքան սահմանների բացումը և հարաբերությունների կարգավորումն աշխատանքներ պետք է տարվեն թուրքական ծագման վերջնական սպառման ապրանքները հայկական արտադրությամբ փոխարինելու ուղղությամբ՝ թիրախային ծրագրեր իրականացնելով հատկապես գյուղատնտեսության և տեքստիլի ոլորտներում:
3. Թուրքական կապիտալի հնարավոր զգալի ներհոսքին դիմակայելու նպատակով անհրաժեշտ է վերանայել օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտը՝ առանձնացնելով և պաշտպանելով ռազմավարական այնպիսի ոլորտներ, որոնք առավել զգայուն կլինեն թուրքական կապիտալի էքսպանսիայի նկատմամբ: Առանձնահատուկ կարգավորման է ենթակա անշարժ գույքի շուկայի իրավական դաշտը՝ հատուկ հսկողություն սահմանելով այլազգիների՝ Հայաստանում անշարժ գույքի ձեռքբերման գործընթացի վրա:
4. Առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացնել միկրո-, փոքր և միջին ձեռնարկատիրությանը՝ հաշվի առնելով, որ դրանց թողարկած արտադրանքի սպառման հիմնական վայրը տեղական շուկան է, և հայկական ապրանքները կարող են պակաս մրցունակ լինել թուրքական սպառման ապրանքների ներմուծման դեպքում:
5. Գործընթացից առաջ բնակիչների հետ պետք է տանել ակտիվ աշխատանքներ նրանց մոտեցումները, մտահոգություններն ու վախերը բացահայտելու ուղղությամբ, ստեղծել քաղաքացի–պետություն փոխադարձ վստահության վրա հիմնված գործընկերություն՝ հաշվի առնելով հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ոչ միայն տնտեսական, այլև

քաղաքական, սոցիալական, մշակութային և, ամենակարևորը, հոգեբանական ասպեկտները:

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » ——————— 2023 թ. N – L

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. Հավանություն տալ.

1) հայ-թուրքական սահմանի բացման համար անհրաժեշտ իրավական ակտերի ընդունման վերաբերյալ հայեցակարգին՝ համաձայն հավելված 1-ի.

2) հայ-թուրքական սահմանի բացման համար անհրաժեշտ իրավական ակտերի ընդունման վերաբերյալ հայեցակարգից բխող գործողությունների ցանկին՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրը:

Հավելված 1

ՀՀ կառավարության ———— թվականի

համար ——— որոշման

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ

1. Սույն հայեցակարգը մշակել են «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ն և «Ի Էլ Էլ գործընկերություն» ՓԲԸ-ն:

ՆԱԽԱԲԱՆ

2. Հայաստանի Հանրապետության հարևան երկրներն են՝ հյուսիսում՝ Վրաստանը, արևելքում՝ Ադրբեջանը, հարավում՝ Իրանը, հարավ-արևմուտքում՝ Ադրբեջանը, արևմուտքում՝ Թուրքիան: Հայաստանի Հանրապետությունն արտաքին աշխարհի հետ կապը պահում է հայ-իրանական և հայ-վրացական սահմանների միջոցով: Հայաստանի և Թուրքիայի միջև բացակայում են դիվանագիտական հարաբերությունները:

3. 1991 թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը, սակայն Հայաստանի և Թուրքիայի միջև չեն հաստատվել դիվանագիտական հարաբերություններ:

4. 1993 թ. Թուրքիան միակողմանիորեն փակել է Հայաստանի հետ օդային և ցամաքային սահմանները, իսկ 1995 թ. վերաբացել օդային սահմանը: Հայաստանն ու Թուրքիան միջազգային գործընկերների աջակցությամբ մի քանի փորձ են կատարել երկկողմ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Հայկական կողմի նախաձեռնությամբ 2008 թ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հերթական փորձի շնորհիվ 2009 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ և ԹՀ արտաքին գործերի նախարարները Ցյուրիխում ստորագրել են «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները: Այդուհանդերձ, Թուրքիան հրաժարվել է խելամիտ ժամկետներում վավերացնել ստորագրված արձանագրությունները: 2010 թ. ապրիլի 22-ին, ՀՀ նախագահի հրամանագրով, հայկական կողմը կասեցրել է ստորագրված արձանագրությունների վավերացման գործընթացը, իսկ ՀՀ նախագահի 2015 թ. փետրվարի 16-ի հրամանագրով հայ-թուրքական արձանագրությունները հետ են կանչվել Ազգային ժողովից: ՀՀ նախագահի 2018 թ. մարտի 1-ի հրամանագրով դադարեցվել է հայ-թուրքական արձանագրությունների կնքման գործընթացը:

5. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ներկայիս գործընթացը մեկնարկել է 2021 թ. վերջին: Երկու երկրների հարաբերությունները կարգավորելու նպատակով Հայաստանի և Թուրքիայի նշանակած հատուկ ներկայացուցիչները հանդիպել են չորս

անգամ՝ 2022 թ. հունվարի 14-ին, փետրվարի 24-ին, մայիսի 3-ին և հուլիսի 1-ին:

6. 2022 թ. հուլիսի 1-ին Հայաստանի և Թուրքիայի հատուկ ներկայացուցիչները Վիեննայում պայմանավորվածություն են ձեռք բերել հնարավոր ամենասեղմ ժամկետներում ապահովելու Հայաստան-Թուրքիա ցամաքային սահմանը հատելու հնարավորություն Հայաստան և Թուրքիա այցելող երրորդ երկրների քաղաքացիների համար և որոշել են սկսել այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները: Նույն հանդիպման ժամանակ կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել հնարավոր ամենասեղմ ժամկետներում սկսելու Հայաստան–Թուրքիա օդային ուղիղ բեռնափոխադրումները և այդ ուղղությամբ անհրաժեշտ գործընթացները:

7. 2023 թ. հունվարի 6-ին թուրքական կողմը տեղեկացրել է, որ վերացվել են երկու երկրների միջև օդային ուղիղ բեռնափոխադրումների բոլոր խոչընդոտները: Հայաստան–Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակում 2022 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին տեղի է ունեցել երկու երկրների միջգերատեսչական մասնագիտական խմբերի երկու հանդիպում: Հայաստան–Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակում 2022 թ. փետրվարից վերականգնվել է երկու երկրների միջև ուղիղ ավիահաղորդակցությունը[13]:

8. Ե՛վ Հայաստանը, և՛ Թուրքիան Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության հիմնադիր-անդամ են:

[13] Տե՛ս՝ https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr, դիտվել է՝ 15.01.2024:

Կազմակերպությունը հիմնադրվել է 1992 թ. հունիսի 25-ին: Կազմակերպության կանոնադրության 3-րդ հոդվածը սահմանում է.

ա) գործել բարեկամության և բարիդրացիության ոգով և զարգացնել անդամ պետությունների միջև փոխադարձ հարգանքն ու վստահությունը, երկխոսությունն ու համագործակցությունը.

բ) հետագայում զարգացնել երկկողմ և բազմակողմ համագործակցությունը միջազգային իրավունքի սկզբունքների և կանոնների հիման վրա.

գ) հանդես գալ գործարար միջավայրի բարելավման և տնտեսական համագործակցության գործընթացում անմիջականորեն ներգրավված ձեռնարկությունների և ընկերությունների անհատական և կոլեկտիվ նախաձեռնության խթանման համար.

դ) զարգացնել տնտեսական համագործակցությունը՝ չհակասելով անդամ պետությունների միջազգային պարտավորություններին, այդ թվում՝ միջազգային կազմակերպություններին կամ հաստատություններին ինտեգրացիոն կամ այլ բնույթի նրանց անդամակցությունից բխող պարտավորություններին և չխոչընդոտելով երրորդ կողմերի հետ նրանց հարաբերությունների խթանմանը.

ե) հաշվի առնել ներգրավված անդամ պետությունների հատուկ տնտեսական պայմանները և շահերը.

զ) հետագայում խրախուսել այլ շահագրգիռ պետությունների, միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատությունների, ինչպես նաև ձեռնարկությունների և ընկերությունների մասնակցությունը ՍԾՏՀ գործընթացին:

9. ՍԾՏՀ կանոնադրության 4-րդ հոդվածը սահմանում է. *«Ըստ համաձայնեցված սկզբունքների և իրենց մարդկային, բնական և այլ ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակով իրենց ազգային տնտեսությունների կայուն աճին և իրենց ժողովուրդների սոցիալական բարեկեցությանը հասնելու համար անդամ պետությունները համագործակցում են հետևյալ ոլորտներում՝ առևտուր և տնտեսական զարգացում, բանկեր և ֆինանսներ, հաղորդակցություն, էներգիա, տրանսպորտ, գյուղատնտեսություն և ագրոարդյունաբերություն, առողջապահություն և դեղագործություն, շրջակա միջավայրի պաշտպանություն, զբոսաշրջություն, գիտություն և տեխնոլոգիա, վիճակագրական տվյալների և տնտեսական տեղեկույթի փոխանակում, մաքսային և սահմանային այլ մարմինների միջև համագործակցություն, մարդկային շփումներ, կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների, զենքի և ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության, ահաբեկչության և անօրինական միգրացիայի բոլոր գործողությունների կամ հարակից այլ բնագավառներում Խորհրդի որոշմամբ պայքարելու համար»:*

10. Թուրքիան ՍԾՏՀ կանոնադրության ուժով ստանձնած բոլոր պարտավորությունները չի կատարում ՀՀ-ի հանդեպ: Ավելին՝ ՍԾՏՀ կանոնադրությունը վերապահումների հնարավորություն չի տալիս:

11. Թուրքիայի հետ սահմանի բացումը, որպես կանոն, կապվում է ՀՀ տնտեսության զարգացման աճի հետ, քանի որ ՀՀ-ն մի շարք ապրանքներ ներմուծում է Թուրքիայից Վրաստանի ցամաքային տարածքով: 2022 թվականի արդյունքներով՝ Թուրքիան օդային ճանապարհով Հայաստան է ներմուծել 3,1 տոննա, իսկ բեռնատարներով

(Վրաստանի տարածքով)՝ 24.903,8 տոննա բեռ: Այսպիսով, Թուրքիայից Հայաստան արտահանման բեռների առյուծի բաժինը՝ 99,9 %-ը, ցամաքային երթուղով է փոխադրվում, 0,01 %-ը՝ օդային[14]:

12. 2002 թ. նոյեմբերի 29-ին քննարկվել է Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության հարցը, և թուրքական կողմը պաշտոնական ծանուցմամբ տեղեկացրել է գլխավոր քարտուղարին, որ Թուրքիան վերապահում ունի Մարաքեշի համաձայնագրի 12-րդ հոդվածի շրջանակում, որի հիման վրա ԱՀԿ ռեժիմը երկու պետությունների միջև չի կիրառվում:

13. Հայ-թուրքական սահմանի բացման ուղղությամբ 2023 թ. մայիսից Լիբերալ քաղաքականության ինստիտուտն անցկացրել է քանակական հետազոտություններ հայ-թուրքական սահմանին գտնվող համայնքների բնակիչների շրջանում: Հետազոտության նպատակն էր պարզել սահմանին ապրող բնակիչների կարծիքը հայ-թուրքական հարաբերությունների և հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման մասին, ինչպես նաև վեր հանել քաղաքացիների առաջարկները, վախերը և անհանգստությունները:

14. Սույն հայեցակարգի առարկան է հայ-թուրքական սահմանի բացման դեպքում անհրաժեշտ իրավական ակտերի ընդունումը, որը կապահովի սահմանի բացման բնականոն ընթացքը: Հարկ է նշել, որ միջպետական հարաբերությունների կարգավորման համար հիմնականում որպես գործիքակազմ օգտագործվում են երկկողմ փաստաթղթերը, ուստի սույն հայեցակարգի շրջանակում

[14] Տե՛ս՝ https://armeniasputnik.am/20230501/inch-kta-hajastanin-turqiaji-het-sahmani-bacumy-manramasnery-tvervov-58975019.html, դիտվել է՝ 15.01.2024:

անհրաժեշտություն կլինի անդրադառնալու փոփոխություններ կատարելուն ոչ միայն ներպետական իրավական, այլև երկկողմ միջազգային փաստաթղթերի դաշտում:

15. Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման դեպքում անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը քարտեզագրելու համար ուսումնասիրվել է հայ-վրացական հարաբերությունները կարգավորող շուրջ 120 երկկողմ փաստաթուղթ, որոնք ընդունվել են Հայաստանի և Վրաստանի միջև 1991 թվականից մինչև 2022 թվականը[15]:

16. Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման դեպքում անհրաժեշտ իրավական ակտերի ցանկը քարտեզագրելու համար ուսումնասիրվել է հայ-իրանական հարաբերությունները կարգավորող շուրջ 181 երկկողմ փաստաթուղթ, որոնք ընդունվել են Հայաստանի և Իրանի միջև 1992 թվականից մինչև 2022 թվականը[16]:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

17. Սույն հայեցակարգի նպատակն է հստակեցնել այն իրավական ակտերի շրջանակը, որոնք Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտաբար պետք է ընդունի հայ-թուրքական սահմանի բացման դեպքում:

18. Հայ-թուրքական սահմանի բացմամբ պայմանավորված՝ սույն հայեցակարգի խնդիրներն են.

[15] Տե՛ս՝ https://www.mfa.am/filemanager/Bilateral/legal/georgia/ge_arm_legal.pdf, դիտվել է՝ 15.01.2024:
[16] Տե՛ս՝ https://www.mfa.am/filemanager/Bilateral/legal/iran/iran_arm.pdf, դիտվել է՝ 15.01.2024:

1) ուրվագծել այն հարցադրումները, որոնք անհրաժեշտ է կարգավորել երկկողմ միջազգային իրավական փաստաթղթերի շրջանակում.

2) միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա անհրաժեշտության դեպքում ներպետական իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարել.

3) հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման դեպքում պետական սահմանի անցման կետերի տարածքում մաքսային հսկողության գոտիներ սահմանել.

4) հայ-թուրքական սահմանի բուֆերային գոտի սահմանել:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

19. Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո անհրաժեշտություն կլինի երկկողմ միջազգային փաստաթղթերի շրջանակներում կարգավորելու այլ հարաբերություններ:

20. Սկզբնական փուլում անհրաժեշտ կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև եկկողմ մակարդակում կարգավորել ստորև նշված բնագավառները և ընդունել համապատասխան փաստաթղթեր.

1) մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ.

2) տնտեսական հարաբերությունների կարգավորման համար.

3) անվտանգության ոլորտի հարաբերությունների կարգավորման համար.

4) թմրադեղերի և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության վերաբերյալ.

5) մշակութային արժեքների պահպանության համար.

6) տրանզիտ ուղևորափոխադրման և բեռնափոխադրման վերաբերյալ.

7) առողջապահության մասին.

8) տուրիզմի վերաբերյալ.

9) ավտոմոբիլային հաղորդակցության մասին:

21. Վերոնշյալ բնագավառները կարգավորող երկկողմ փաստաթղթերը ընդունելուց հետո անհրաժեշտություն կլինի ընդունելու երկկողմ փաստաթղեր իրավական փոխօգնության, հանձնման, ինչպես նաև համապետական գործադիր մարմինների համակարգման ներքո գնտվող բնագաբառների վերաբերյալ:

22. Երկողմ փաստաթղթերի ընդունումից հետո պետք է մշակվի ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որը կկարգավորի Հայաստանի և Թուրքիայի միջև մաքսային սահմանների անցման կետերը, մաքսային հսկողության գոտիները և անվանումները:

23. Միաժամանակ, հիմք ընդունելով հանրային հատվածի ակնկալիքները, անհրաժեշտ է երկկողմ փաստաթղթերում ամրագրել որոշակի սահմանափակումներ, որոնք կապահովեն հայ ժողովրդի անվտանգությունը և Հայաստանի պետականությունը, մասնավորապես.

1) Կարգավորել անշարժ գույքի շուկայի իրավական դաշտը՝ հատուկ հսկողություն սահմանելով այլազգիների՝ Հայաստանում անշարժ գույքի ձեռքբերման գործընթացի վրա:

2) ՀՀ արտադրանքի, այդ թվում՝ գյուղատնտեսական մթերքի սպառումն ապահովելու համար անհրաժեշտ է սահմանափակել այդպիսի ապրանքների ներմուծումը ՀՀ կամ սահմանել այնպիսի մաքսային և հարկային պարտավորություններ, որոնց միջոցով տնտեսապես ոչ արդյունավետ կլինի այդպիսի ապրանքների ներմուծումը ՀՀ:

24. Վերոնշյալ սահմանափակումները պետք է ամրագրվեն նաև նորմատիվ իրավական ակտերում, որոնք հնարավորություն կտան իրավակիրառ մարմիններին գործնականորեն կիրառելու այդ սահմանափակումները:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

25. Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման դեպքում և դիվանագիտական հարաբերությունները կարգավորելուց հետո անհրաժեշտ կլինի ընդունել երկկողմ փաստաթղթեր հետևյալ ոլորտների վերաբերյալ.

1) անվտանգություն,

2) հանցավորության դեմ պայքար,

3) մշակույթի պահպանություն,

4) բեռնափոխադրում,

5) ուղևորափոխադրում,

6) տուրիզմ,

7) ավտոմոբիլային հաղորդակցում:

26. Երկկողմ փաստաթղթերի՝ հանրային հատվածի վերհանված կարիքների հիման վրա կներդրվեն համապատասխան սահմանափակումների մեխանիզմներ:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

27. Հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման համար համապատասխան իրավական ակտերի նախագծերի պատրաստման նպատակով կօգագործվեն օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ:

Հավելված 2

ՑԱՆԿ

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[17]

Հ/Հ	Գործողության անվանում	Կատարող	ժամկետ	Ֆինանսավորում	Ակնկալվող արդյունք
1	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև սահմանին մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ համաձայնագրի նախագծի պատրաստում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ստորագրման դեպքում հնարավոր կլինի երկու պետությունների սահմանին տեղադրել մաքսային անցակետեր:
2	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետությա	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունման դեպքում հնարավոր կլինի կարգավորել երկու

[17] Կատարող մարմինների անվանումները և ժամկետները պայմանական են:

	ն միջև տնտեսական հարաբերությունների մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում				պետությունների միջև տնտեսական հարաբերությունները և նախատեսել համաձայնագրում հանրային հատվածի բարձրաձայնած սահմանափակումները:
3	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև փոխադարձ համագործակցության և անվտանգության մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունման պարագայում հնարավոր կլինի կատարել երկու երկրների իրավապահ մարմինների միջև տեղեկության փոխանակում:
4	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետությա	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունումը հնարավորություն կտա առավել արդյունավետ

	ն միջև թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի շուրջ համագործակցության մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում				պայքարելու թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության դեմ:
5	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև մշակութային արժեքների պահպանության մասին համաձանագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունը իրավունք կստանա Թուրքիայից պահանջելու պահպանել հայկական մշակութային արժեքները:

6	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև տրանզիտ ուղևորափոխադրման և բեռնափոխադրման վերաբերյալ համաձանագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Այսօր տրանզիտ ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ կատարվում են, սակայն բացակայում է երկու պետությունների միջև վավերացված համաձայնագիրը:
6	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ուղևորափոխադրման և բեռնափոխադրման վերաբերյալ համաձանագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունմամբ կկարգավորվի երկկողմ փոխադարձ բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները:

7	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև առողջապահության մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունումը կկարգավորի երկկողմ հարաբերությունները առողջապահության ոլորտում:
8.	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև տուրիզմի խրախուսման և զարգացման մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունումը կկարգավորի երկկողմ հարաբերությունները տուրիզմի զարգացման ոլորտում:
9	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետությա	ՀՀ կառավարություն	2023 թ. դեկտեմբեր	Օրենքով չարգելված աղբյուրներ	Սույն համաձայնագրի ընդունումը կկարգավորի երկկողմ հարաբերությունները

	ն միջև ավտոմոբիլային հաղորդակցությա ն մասին համաձայնագրի նախագծի մշակում և ընդունում				ավտոմոբիլային հաղորդակցության ոլորտում: